№ 192 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 № 192

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Միքայէլեան պրօսպ. № 24/4 տանը գտնվող
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ԼԵԶՈՒՆԵՐ ԵՆ սովորեցնում 8 ամսում տեսական և գործնական դասընթացների միջոցով. ամսական 5 րուբլի: Ընդունելութիւնն ամեն օր 4—7 ժամը:
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(առ.) 1—10

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ
Ընտանիքներում
Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ
Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21:
առ. 1—20

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Յարմարեցրած ձայնեղների համար
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ
50-ով առնողին 20% զիջում:
Դիմել՝ Армавиръ (Кубан. обл.) Регенту С. Шааняну.
առ. 4—5

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
Ի. Մ. ՄԱՏԿՕՎՍԿԻ
Սեպտեմբերի 1-ից բացել է իր տանը դաշնակահարութեան կուրսեր, ուր աւանդվում են տեսական երաժշտութիւն եւ նուագ: Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է առ. 10—2 ժ. և 5—7 ժ. եր.: Ուսմունքը սկսվել է սեպտեմբերի 1-ից: Պայմանների մանրամասնութիւնները՝ Саперная ул., д. № 5, кв. И. М. Матковскаго.
առ. (ու.կ.ե.) 3—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ա. Զ. ԽԻԶԱՆԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներին առաջվայ պէս: Սօլոլակ, Վելեամինովսկայա փողոց № 14:
(ե. հ. կ.) (առ.) 6—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրվայ պահանջներ. Վերջին տեղեկութիւններ. Ղափանի ընդհարումները. Նամակ Գանձակից. Մի քանի խօսք մահմեդական և հայ աշխատաւորներին. Էջմիածնից. Քաղաքացին գիւղացուն հարստահարում է թէ ոչ. Մի բացատրութիւն. Պարսկաստանի սահմանադրութեան մասին. Մատենագրութիւն. Նամակ Բագուից. Նամակ Կարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ֆրանսիան և Պապը: Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՕՐՎԱՅ ՊԱՀԱՆՋՆԵՐ

I

Ձեզնից երկու պահանջ ունի աղէտի ենթարկված գիւղացին—երկու խոշոր և էական պահանջներ:

Տուէք նրան ապրուստի միջոց առաջիկայ ձմեռվայ համար:

Տուէք նրան սերմացու իր աշնան ցանքը անելու համար:

Դուք պէտք է այդ պահանջները վերցնէք անմիջապէս ձեր ուշադրութեան և հոկողութեան տակ:

Այլապէս սովի կը մատնէք ժողովրդին ձմեռվայ ամիսներում:

Սովի կը մատնէք նրան և հետեւեալ տարում, որովհետեւ եթէ գիւղացին սերմանած չի լինիլ իր արտերը, նա ոչինչ չի ունենայ յաջորդ տարում և ստիպված պէտք է լինի կամ գիւղում սոված մնալ, կամ գաղթել գիւղից:

II

Այնպիսի գիւղեր կան, ուր գիւղացին այժմեանից իսկ ուտելու պաշար չունի և սկսել է մուրալ ու պարտքեր անել: Միւս գիւղերը ունեն միայն մի քանի ամսվայ պաշար:

Եթէ Շամշադինը, Բաղան, Խաչենը չենթարկվէին կարկտի աւերմունքին, կունենային բաւականաչափ պաշար ձմեռվայ համար և գուցէ չը դիմէին կողմնակի օգնութեան. բայց այդ դժբաղդութիւնն էլ եկաւ աւելացնելու աղէտի ծանրութիւնը:

Հին-Նախիջևանի գաւառի կարօտութեան պատճառներից մէկը վատ հունձն է, իսկ միւսը այն, որ գիւղացիները անցեալ տարվայ աղէտի ազդեցութեան տակ շատ սահմանափակ չափով ցանեցին իրանց արտերը և չունեն այնքան պաշար, որ հանգիստ սրտով սկսեն ձմեռվայ իրանց կեանքը:

III

Եթէ ենթադրենք, որ աղէտի ենթարկված շրջանի գիւղացին, միջին հաշւով, կարող կը լինի իր սեփական միջոցներով ապահովել հինգ ամսվայ իր ապրուստը և կարօտութիւն պէտք է ունենայ եօթն ամսվայ պաշարի, այն ժամանակ մենք կը տեսնէինք, որ անհրաժեշտ է ունենալ առ նուազն 200,000 փութ հացահատիկ թէ ապրուստի միջոցները և թէ սերմացուն հայթայթելու համար:

Անտարակոյս, ներկայումս անկարելի է ճիշդ վիճակագրական թւեր ներկայացնել բոլոր այն չքաւոր ընտանիքների մասին, որոնք օգնութեան կարօտ են, բայց աչքի առաջ ունենալով այն տեղեկութիւնները, որոնք հասել են մեզ, մենք կարող ենք մօտաւորապէս գաղափար կազմել կարիքի չափի մասին:

IV

Մենք կը ներկայացնենք միայն կլոր թւեր և այն ոչ չափազանցրած:

Օրինակ, գիւղական տան մէջ միջին թւով հաց պահանջվում է ամսական ամեն մի շնչի համար 1½ փութ, երբեմն աւելի, երբեմն պակաս: Իսկ մենք ընդունել ենք մեր հաշիւներում միայն մէկ փութ: Ահա ընդհանուր նկարագիրը.

Շրջաններ	Ուտելու հաց փութ	Սերմանելու աշնան	գարնան
Արցախ Զանգեզուր	70,000	10,000	10,000
Շամշադին Կազախ	14,000	6,000	2,000
Բաղա	14,000	5,000	3,000
Արեշ	14,000	4,000	2,000
Հին-Նախիջևան Շարուր	35,000	10,000	5,000
	147,000	35,000	22,000

Ընդամենը 204,000 փութ հացահատիկ ուտելու և սերմանելու համար:

V

Ահա այդ 204,000 փութ հացահատիկ հայթայթելը պէտք է կազմէ մեր առաջիկայ ամենամեծ պարտաւորութիւններից մէկը:

Պէտք է այժմ մանաւանդ շտապել տալու սերմացուն, որովհետեւ աշնանացանը կատարվում է սեպտեմբեր ամսում և մասամբ հոկտեմբերին:

Եթէ այժմ չօգնեցինք, մենք շատ բան կը կորցնենք: Անհրաժեշտ է ամեն միջոց գործ դնել, որ արտերը ցանվեն և գիւղացին վերանորոգէ իր տնտեսութիւնը:

Մեր առաջ բերած թւերը փոքր մասն են կազմում այն կարօտութեան, որ ունեն աղէտեալ շրջանները: Կարիքները բազմազան են և մեծ:

Գոնէ հայթայթենք ուտելու հաց և միջոց տանք սերմանելու արտերը:

Այդ պարտաւորութիւնը դրված է քո առաջ, հայ հասարակութիւն:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, 2 սեպտեմբերի

Երէկ երեկոյեան մօտ ժամը 11-ին տեղիս հասարակաց տանը պատահել է հետեւեալ դէպքը: Երկու կազակի և երեք թուրքի միջև լուրջ ընդհարում է տեղի ունենում, որը փոխվում է կռուի: Թուրքերից մէկը, հանելով խանչալը խրում է կազակի մէկի փորը: Կազակի ձայնին վազում են ներս հերթապահ երկու հայ գորոդովօյներ և ուզում են բռնել թուրքերին և ազատել կազակներին: Բայց թուրքերը թողնելով կազակներին յարձակվում են գորոդովօյների վրա և մէկին վիրաւորելով փորից և միւսին ձեռքից՝ փախչում են: Ոստիկանութեամբ աշխատվում է բռնել թուրքերին, որ և յանձնում են արդարադատութեան ձեռքը: Ինչպէս լսեցինք, թէ կազակի և թէ գորոդովօյի վէրքը վտանգաւոր է: Քաղաքը առ այժմ խաղաղ է. եթէ այսպէս մի քանի ամիսներ շարունակվի, կարելի է յոյս դնել, որ հայ-թուրքական ընդհարումներին վերջ կը լինի: Թուրքերը վստահ լինելով հայոց վրա, անցնում են նրանց բոլոր թաղերը:

Գ. Աղաջանեան

Գանձակ, 3 սեպտեմբերի

Բանանցից Գանձակ են եկել հինգ կանայք, որոնցից մէկի տղան, միւսի ամուսինը, նոյեմբերի 17-ին կոտորել են Ղարա-երում Ֆօրերի այգում թուրք խուժանի ձեռքով. Սահակեանի մեքենան մինչև օրս չը գտնվեց, հակառակ ոստիկանութեան ձեռք առած խիստ միջոցների: Երէկ, ոստիկանութիւնը ձերբակալեց գերմանական ուսանող Հայկ Մելքոնեանցին, ուսանող Խորէն Համասփիւռեանին և Իվան Արզումանեանցին (դրամաշար). մի քանի ժամից յետոյ նորէն արձակեցին: Լուր է պտտվում, որ խիստ միջոցներ պէտք է ձեռք առնեն մեքենան գտնելու համար: Երէկ, ամսիս 2-ին, բանանցեցի և չովդառեցի մի բազմամարդ կարաւան քաղաք գալիս, երբ հասնում են Թօփալ-Հասանլու թուրքական գիւղը, գիւղացիներից ձիաւոր և ջորաւորները քշում առաջ են վազում, իսկ էշաւոր չովդառեցի Յովակիմ Յարութիւնեան 16-ամեայ մի պատանի յետ է մնում չը հասնելով ձիաւորներին: Վերջինները բաւական տեղ գնալով նկատում են, որ պատանին չը կայ, վերադառնում են դէպի գիւղ, որից երևում է, որ թուրքերը պատանուն և աւանակին անհետացրել են: Գիւղացիք յայտնեցին իշխանութեանը:

Ա. Ս.

Պետերբուրգ, սեպտեմբերի 2-ին

Երեկոյեան ժամը 6-ին ամարանոցում հանգստութեան ժամանակ սրտի պայթումից մեռաւ գեներալ Տրեպովը:

«Հեռ. Գործ.»

ՂԱՓԱՆԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Օգոստոսի 27-ին

Օգոստոսի 2-ին Գօրիսի և Ղափանի հաղորդակցութիւնը ընդհատվեց: Ամբողջ 24 օր Ղափանը իր ընդհարումներով մեզնից անյայտ և անմատչելի էր: Այդ միջոցում մեր ստացած կցկտուր տեղեկութիւնները այնքան հակասական էին իրար, որ մենք ստիպված էինք լռել, մինչև ստոյգ տեղեկութիւններ ստանալը: Մեր ստացած տեղեկութիւնների մէջ տարբերութիւնը միայն որոշ դէպքերի, կռիւների մանրամասնութիւններն են, որոնք աւելորդ են տպագրութեան համար:

Ընդհարումները այսպէս են սկսվել: Օգոստոսի 1-ին, երբ Բէխ գիւղի մօտ արածում էին հանքերում աշխատող ձիերը, մօտակայ Շհարջիկ և Աչաղուի թուրքերը յարձակվում են ձիերի վրա. ձիապանը դիմադրում է նրանց. թուրքերը սպանում են մէկ ձի, քիչ յետոյ էլ սպանելով ձիապանին՝ նրա զէնքերը առնում և յարձակվում են գործում Բարաբաթումը գիւղի տաւարի վրա:

Հետեւեալ օրը, օգոստոսի 2-ին, թուրքերը, ի մի հաւաքվելով Ղարաչիման, Սիդնաք և այլ շրջակայ գիւղերից, յարձակվում են «Սիւնիք» գործարանի վրա, այրում, փչացնում: (Մանրամասնութիւնը տես «Մշակ» № 180): Գործարանի ընդհանուր վնասը հասնում է բաւական մեծ գումարի: «Սիւնիք» գործարանը իր գոյութեան ընթացքում մի օգտաւէտ և յարմար աշխատանք մատակարարող գործատեղի էր հանդէս գալիս տեղական բանւոր դասակարգի համար: Եւ որքան բաղդաւորված էին նրանք, խեղճ գիւղացիք, այնտեղ, իրանց գիւղերի ծննդավայրի մօտ գտնվող գործարանում աշխատելիս՝ այնքան մեծ անբաղդութիւն և ցաւ էր նրանց տեսնել մի այդպիսի գեղեցիկ հիմնարկութիւն, ուր բանւոր դասակարգը առանց ազգի, կրօնի խտրութեան բանում էր արդիւնաբերութիւնը առաջ տանելու և իրանց կարիքները լրացնելու համար, այրված ու մոխիր դարձած: Տեսնել ամբողջ մի երկրի հաց մատակարարող աղբիւրը չորացած ու ցամաքած՝ չէ կարելի չափսոսալ: «Սիւնիք»-ը մի աղբիւր էր:

Եւ ճնշող լուրի ծանր տպաւորութեան տակ, երբ Ուգուրչայի բազարից հայերը փնտռ ու յուսահատ սրտով քշվում էին իրանց գիւղերը, քեարխանցի թուրքերը նրանց վրա հրացան են կրակում ու հալածել սկսում:

Հայերը, թուրքերի այս քայլը արդէն չափ ու սահմանից դուրս համարելով, յարձակվում են Քեարխանա (օգոստ. 3-ին), հետեւեալ օրը (4-ին) Զուլլը և Ինջավար գիւղերի վրա. պատիժը անասելի և անպատմելի է լինում: Սակայն, թուրքերը, չը խրատվելով այդ պատժից, յարձակվում են մեծ բազմութեամբ (օգոստ. 5—6) Ղարաբաբա հայ գիւղի վրա (30 տ.). հայերը անկարող լինելով դիմադրել թուրքական խառնիճաղանճ, ստուար ամբոխին, թողնում են գիւղը և գիշեր ժամանակ ապաստանում են մօտակայ հայ գիւղում: Թուրքերը Ղարաբաբան թալանում, այրում են. սպանված են ընդամենը 5 հայ, իսկ թուրքերից մի քանի տասնեակներ են ընկել դիրքերում:

Օգոստ. 7—8 հայերը յարձակվում են Եմազլուների (վերին, ներքին), Խաչտափ, Դաշնաւ գիւղերի վրա, այրում փչացնում են և Ղարաբաբայի վրէժը առնում:

Օգոստ. 9-ին թուրքերը դարձեալ մեծ բազմութեամբ յարձակվում են Վըժէնիս և Եղվարդ գիւղերի վրա, աւերակ ու մոխիր դարձնելու յուսով, բայց աւաղ. նրանք գլխիկոր և ամօթալի պարտութեամբ և մեծ կորուստներով յետ են փախչում:

Օգոստ. 10-ին նոյն այդ փախչողները գնում փորձում են յարձակվել Կաւարտի վրա, բայց դարձեալ պակաս շարքերով ստիպված են լինում յետ դառնալ:

Օգոստ. 11-ին Կաւարտի վրա կատարած յարձակման լուրը հանքերին մօտիկ հայ գիւղերում երբ տարածվում է, հայերը հաւաքվելով յարձակվում են ործում Ղաթարի վրա: (Ղաթարը հայկական գիւղ չէ, ինչպէս սխալմամբ յիշված է «Մշակի» № 182-ում մի մասնաւոր նամակից տպագրված տեղեկութեան մէջ): Ղաթարը՝ իր հարուստ և ազա թուրքերով մի շարիք էր հայ և թուրք բանւոր դասակարգի համար. անպատմելի կեղեքումների, հարստահարութեան էին ենթարկված խեղճ գիւղացիք տղրուկ ազաներից, որոնց գոյութիւնը բանւորների համար մեծ պատուհաս էր:

Հանքերին, գործարանին մօտ լինելով՝ Ղաթարը բնականաբար հարուստ կը լինէր, առանց հաշուի առնելու ճանապարհի վրա գտնվելը, որից հազարներ էր օգտվում ամեն տարի քոչւոր թարաքեամաներից: Նաև առաջին անգամ Ղափանի թուրքական շրջանում Ղաթարն է պատիւ ունեցել ջանրեգարների խումբ ունենալու և թուրքերի կատարած յարձակումների հրահանգները եղած էին Ղաթարից և իրագործում էին նրանք բոլոր հրամանները, որոնց հետեւանքը այնքան թանգ, դառը և վնասաբեր էր նրանց համար:

Ղաթարի դէրը Ղափանի շրջանում և Սաբունչու դէրը Բագուի, անչափ նման են: Ընդհարման ժամանակ Ղաթարում ապրում էին և Սոֆլուի (3 գիւղեր են) քոչւորները, որոնք ամենաապահով գիւղ կարծելով, տեղաւորվել էին Ղաթարում և մասնակցում էին կռիւներին:

Ղաթարի կռիւը, երկու կողմերի համար էլ, անչափ խիզախ, վճռական կռիւ է եղել և իր բազմաթիւ կորուստներով Զանգեզուրի կռիւներից ամենամեծը կարելի է հաշվել: Որքան ուժեղ է եղել թուրքերի սկզբնական դիմադրութիւնը, այնքան և շատ շուտ է եղել պարտութիւնը: Այրված և փչացված են ամեն ինչ: Տների մեծ մասը փլվել և քարուքանդ է եղել թուրքերի իրանց տներում ամրացած ռազմամթերքի պայթումներից, որոնց յաճախակի տրաք-տրաքոցները ռմբակոծութեան էին նմանում: Ղաթարում հայերից սպանվում է մէկ հոգի, մէկն էլ վիրաւորված է, իսկ թուրքերից սպանվածների թիւը որոշված չէ...

Ղաթարի վրէժը թուրքերը ծրագրում են առնել Վըժէնիսից: Թուրքերը իրանց հետ տանում են դիրքերը մի քանի բևաղ հայ, խաշլամա և այլն. կանոնաւոր պատրաստութեամբ շրջապատում են Վըժէնիսը: Հայերը թէև սակաւաթիւ, բայց դիմադրում են հազարաւորների մինչև մութը վրա հասնելը, երբ հայերը 12 հոգուց բաղկացած մի խումբ կռւիններ օգնութիւն են ստանում: Անասելի դժուարութիւններին դէմ կռւելով, ծառերի տակերին փորսող կռւելով, անպատմելի խիզախութեամբ դիմադրելով դիրքերը բռնած հարիւրաւորներին, խլում են դիրքերը, ուր թափված են լինում մեծ քանակութեամբ հաց, խաշլամա և այլ պաշար:

Արեւմտքին թուրքերն անմիման փախուստի են դիմում, իսկ հայերը հետամուտ են լինում և թափում են նրանց Փարիջան, Սաղտաղ և Գեօղալ գիւղերը: Հայերը իրար հետեից շրջապատում և երեք գիւղն էլ այրում ու մոխիր են դարձնում:

Թուրքերին հասած մի շարք պարտութեան լուրը դէպի Արաքս տարածվելով, մի քանի խաների խորհրդով 400 հոգուց բաղկացած մի խումբ է օգնութեան գալիս Բահիմ խանի մասնակցութեամբ, որոնց մասին միւս անգամ:

Սպանդարեան

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 1-ին

Երէկ, օգոստոսի 31-ին, առաւօտեան ժամի մօտ 11-ին, երբ Նուխուց դուրս եկած 2 օմնիբուսներ քանի չափ հայ ուղևորներով անցնում էին Անհմադլուանի այգու կից հողերով, այգուց ոչ այնքան հեռու գտնվող թփերի և մօշուտի տակից դուրս են գալիս ոտից մինչև գլուխ զինված և այնալու հրացաններով զինված վեց նուխեցի թուրքերը:

Ուղևորները ճանաչել են իրանց համաքաղաքացի և հարևան Մուխտարին՝ Աղասադին (կաղ), Իսկանդարին, Զաւադ օղլուն և երկու միւս ընկերակիցներին:

Աւազակներն, որոնք ըստ երևոյթին կանխօրէն իմանալիս են եղել իրանց որսերի գալու ժամը, կարում են օմնիբուսի չորս կողմը և հրացանները ուղղելով դէպի ուղևորները, հրամայում են չը շարժվել:

Թւով 15 կանանց և օրիորդներին պատւիրում են, որ չը վախենան, քանի որ նրանց ձեռք տալու չեն, իսկ տղամարդկանց, որոնց թւում չորս ուսանողների, հրամայում են օմնիբուսից ցած իջնել ու շարքով կանգնել: Ուղևորները կատարում են աւազակների բոլոր հրամանները:

Ամենից առաջ հրամայում են միակ ուղևոր թուրք նուխեցի գրագրին, որ ունեցած-չունեցածը յանձնէ իրանց: Գրագիրը լուռ ու մունջ հանում աւազակներին է յանձնում միակ ատրճանակ զէնքը: Ապա փորձում է ատրճանակական էլ յանձնել իրանց, թուրքերն աչք ու ունքով հասկացնում են, որ աւելորդ է:

Հայ ուղևորներին ոչ խուզարկում են և ոչ մի իր են առնում:

Դառնալով շարքով կանգնած հայերին մի առ մի հարցնում են նրանց անունները և ազգանունները, ապա առանձնացնում են ուսանող 15 տարեկան Ալէքսանդր (Սաշա) Միքայէլեանցին, 18 տարեկան Վանդակ Խօջամիրեանցին և 16 տարեկան Գրիգոր Մակեդոնեանցին:

Վերջինիս համար աւազակների մէջ թեր և դէմ վէճ է տեղի ունենում, որոնցից 5-ը ընդդէմ է լինում նրան պատանդ տանելու, իսկ Աղասադը պնդում է Գրիգորին էլ պահելու:

Աւազակներին յայտնի է եղել, որ Գրիգորի ծնողները իբրև ոչ ունեւորներ անկարող են լինելու որևէ փրկանք ուղարկելու, իսկ Աղասադը պնդելիս է եղել հակառակը:

Այդ պահուն մօտենում է աւազակներին Գրիգորի քոյր Օլգա Մակեդոնեանը, աղերսանքով խնդրում, որ ազատեն իր եղբօրը, քանի որ միւնոյն է, նրանք ոչինչ չեն կարող վճարել, թէկուզ եղբօրը սպանելու անգամ լինին: Աւազակները յարգելով քրոջ միջնորդութիւնը՝ ազատ են արձակում Գրիգորին: Ապա աւազակներն առնելով Թուման Եղոյեանի ոսկէ ժամացոյցը, յայտնում են, որ իրանց անհրաժեշտ է մի այսպիսի ժամացոյց ունենալ—օրվայ ժամանակը որոշելու համար:

Ապա դառնալով ուղևորներին, հրամայելով պատւիրում են հետեւեալը: Պատանդ պատանիների ծնողներից քանիցս անգամ աւազակները դրամ են պահանջել, սակայն ծնողները զլացել են աւազակների պահանջը կատարելու: Ուստի հրամայում են ամենակարճ ժամանակամիջոցում յայտնել պատանիների ծնողներին, որ շուտով ներկայացնեն իւրաքանչիւրի համար փրկանք հինգ հազարական րուբլի, հակառակ դէպքում նրանք սպանվելու են պատանիներին զրկել կեանքից:

Կորական ուլտիմատումից յետոյ, աւազակները պատանիների հետ անյայտանում են դէպի շրջակայ անտառը:

Գանձակում և նրա գաւառում, մինչև օրս վարչական կարգով հայ և թուրք ազգաբնակութեան զանազան յանցանքների համար տուգանքներ են նշանակված մօտ 30,000 րուբլի, որից 14 հազարը արդէն ստացված է, իսկ 16 հազարը մնում է ապառիկ: Որովհետև թուրքերն աւելի մեծ չափերով յանցանքներ են կատարել քան հայերը, այդ պատճառով, մօտ 20 հազարը պէտք է վճարեն թուրքերը, իսկ մօտ տասը հազարն էլ ընկնում է հայ ազգաբնակութեան վրա:

Թուրք կառապանները, որ մինչև օրս հայ ուղևորների դէմ բոյկոտ էին արել, գեներալ-նահանգապետի հրամանի համաձայն նրանք ներկայումս վերցնում են նաև հայ ուղևորներ:

Չը գիտենք երբ մի այդպիսի կորական միջոցով վերացնելու է թուրքերի բոյկոտը մթերք ծախելու, որից հաւասար չափերով տուժել և տուժում են երկու կողմերն էլ:

Ալ. Սահակեան

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՒ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻՆ

Մենք առիթ ենք ունեցել գոհունակութեամբ յիշելու Բագուի «Հայաթ» լրագրի բռնած հաշտարար ուղղութիւնը հայ-թուրքական եղբայրասպան կռւի վերաբերմամբ: Այն օրից, երբ պ. Աղայեվ՝ իր ոտքերի փոշին թօթափելով հեռացաւ «Հայաթ»-ից, թողնելով խմբագրութիւնը Հիւսէյն-զադէին, և հիմնեց իր սեփական հոգմացուցային «Իրշադը», այն օրից «Հայաթ»-ում դադարեցին լոյս տեսնել հրդեհաձիգ ու գրգռիչ յօդուածները: Հիւսէյնզադէի խմբագրութեամբ՝ «Հայաթ»-ը աշխատում է դառնալ մի պարկեշտ լրագիր: Ճիշտ է, նա, որպէս «մահմեդական օրգան», «իսլամի» փառքն ու զօրութիւնը երգելու հաճոյքից չէ զրկում իրան, ճիշտ է նա դեռ ևս պինդ կապած է կրօնքի և հոգևորականութեան փէշերին, բայց նրա վարմունքը հայ-թուրքական անմիտ ու արիւնոտ ողբերգութեան մէջ, չնչին բացառութիւններով, գովեստի արժանի է: Նա ոչ միայն չէ յուզում կրքերը, այլ—ամենաիմաստուն միջոցը—լռութիւն է պահպանում այդ՝ ինքնըստինքեան գրգռիչ դէպքերի մասին: Նա չէ տպում թղթակցութիւններ հրդեհի վայրերից և հենց այդ կերպով էլ նա նպաստում է իր ընթերցողների մտքի հանդարտման:

Եւ բացի այն որ «Հայաթ»-ը չէ աշխատում կրքերը վառել, նա աշխատում է բորբոքված կրքերը խաղաղել: Յայտնի է, թէ որքան խոշոր յուզում պատճառեց Շուշու վերջին դժբաղդ ընդհարումը հայ և թուրք հասարակութեան: Ահա հենց այդ վտանգաւոր րոպէներին (յուլիսի 23) «Հայաթ»-ը տպել է հետեւեալ գրութիւնը. «Մի քանի խօսք մահմեդական և հայ աշխատաւորներին» վերնագրով:

«Շուշու վերջին դէպքերը պրօվօկատորներին ճանապարհ բացեց: Շուշում հայ-թուրքական կռիւը նորոգվեց ասելով՝ անխիղճ, անգութ, անկրօն ու անհաւատ պրօվօկատորները իրանց հին բնաւորութիւնից չեն հրաժարվում... քաղաքում, բազարում, քուչէներում, մէյդաններում, ճաշարաններում, կլուբներում ամեն տեղ, անկիրթ պատեհ առիթը գտնելով ասում են. «Շուշում հայ-թուրքական կռիւը սկսվեց, հաւանական է, որ Բագւում էլ սկսվի... «Դրանք անխիղճ մարդկանց մի գազ լինելով՝ ամեն տեսակ դրութեան յարմարվում են: Մահմեդականի տեսնելիս՝ ասում են. «Միթէ լուր չունէք, որ հայերը մահմեդականների գլխին ինչեր բերին: Տներն այրելով կանանց ու երեխաներին գերեցին, ապրանքները թալանելով՝ Շուշուց վռնդեցին...»

Հայի տեսնելիս՝ ասում են... «Վայ, ափսոս հայեր: Միթէ չը գիտէք, թէ քանի հարիւր հայեր ոչնչացան: Շուշի հայ գիւղերը բոլորովին այրվելով վերջացան...»

Երկու կողմերի էլ սիրտ վառող խօսքերը ասելուց յետոյ, անխիղճ պրօվօկատորները մահմեդականի տեսնելիս՝ «Հայերը մեծ պատրաստութիւններ են տեսնում»:—«Հայի տեսնելիս՝ «Մահմեդականները պատրաստվում են» ասելով երկու կողմերին էլ երկիւղի մէջ են ընկղմում... Մի քիչ յետոյ, մէկ էլ տեսար ասացին. «Այս գիշեր երկու հայի են սպանել. և կամ, ոչ երկու մահմեդականի են անհետացրել...» Հայերին, ինհարկէ, մահմեդականներն են սպանել, և մահմեդականներին էլ՝ հայերը ասելով՝ յետոյ երկուսը՝ երեք, երեքը՝ չորս, չորսը՝ ուժ են շինում...

Եթէ նրանցից հարցնէք. «Որտեղից են ձեր այդ լուրերը: Ո՞վ ասաց ձեզ»: Դրանք միատեսակ կը պատասխանեն. «Այդպէս են ասում...» Եթէ հարց տուողը ազէտ է, նրան կը պատասխանեն. «Այս ինչ մարդը տեսել է» և կամ՝ «ես ինքս տեսել եմ...»

Այս օրերում մի այսպիսի անհիմն լուր տարածվել էր, որ ուրբաթ գիշեր այգում բացարձակ խօսում էին. «Վաղը Բագւում կռիւը պիտի սկսվի: Դրա համար է, որ այսօր հրաժշտութիւնը չէ նուագում...:» Այն մարդիկը, որ հրաժշտութեան մասին արված յայտարարութիւնը կարդացել էին, ինհարկէ այդ խօսքերին չէին հաւատում և բացատրում էին, որ յայտարարութիւն կայ թէ երաժշտութիւնը այսուհետեւ ուրբաթ օրերը պիտի նուագէ: Իսկ յայտարարութիւնից տեղեկութիւն չունեցողներից շատերը՝ հաւատացին, թէ հետեւեալ օրը իսկապէս հայ-թուրքական կոտորած տեղի պիտի ունենայ...

Աստուած մի արասցէ, եթէ հետեւեալ օրը մի հայ մի թուրքի, կամ մի թուրք մի հայի սպանված լինէր, պրօվօկատորները ամբողջ քաղաքում այդ լուրը պիտի տարածէին կոտորած առաջացնելու համար: Մի խօսքով այդ կարգի մարդիկ իրանց ձեռքից եկած ամեն միջոցները գործ են դնում և կը դնեն երկու ժողովուրդներին ընդհարելու համար:

Պէտք է, որ երկու ազգերն էլ իրանց թշնամիները ճանաչեն և այդպիսի անխիղճ անձերի խօսքերին հաւատ չընծայեն, յօգուտ երկու դժբաղդ ժողովուրդների... Այո, խոշոր անդունդի եզերքին ենք կանգնած: Մեր դրութիւնը սիրտ ծակող, արտասուելի է: Այս ինչ կեանք է, ինչ կենցաղավարութիւն: Մենք ուր կը հասնենք այսպէս:

Ազատասէրները մի նպատակ, մի իդէալ դնելով իրանց առաջ, իրանց անձն են զոհում այդ նպատակի, իդէալի համար: Նրանք ասում են. եթէ ազատութեան պտուղը մենք ինքներս չը վայելենք, մեզանից յետոյ եկողները կը վայելեն և մեզ կօրհնեն...

Դուք երկու դժբաղդ ազգերդ, երկու հարեւաններդ ինչ նպատակով հրապարակ էք իջել. միմեանց արիւնը թափելով՝ ձեր որ նպատակին, իդէալին էք հասնում: Ո՞վ ում ձեռքից հողը խլելով նրա տէրը կը դառնայ: Ո՞վ ում յաղթելով՝ յաղթվածին իրան պէտք է հպատակեցնէ: Ով ում պատերազմական տուգանք պիտի տայ: Լաւ մտածեցէք: Միմեանց տկարացնելով ուզում էք մի երրորդ գիշատիչի կեր դառնալ: Մինչև հիմա գուցէ իրաւունք ունէիք ազատութիւն պահանջելու, բայց այժմ, այսպիսի վայրենի վարմունքով՝ միթէ կարող էք ազատութիւն ձեռք բերել: Այժմ մի այնպիսի ժամանակ է, որ պէտք է ցոյց տանք, թէ մենք ընդունակ ենք ազատութեան: Պէտք է աշխարհին յայտնենք, թէ մենք հասկանում ենք ազատութեան, աւտօնօմիայի ինչ լինելը... Միթէ չը գիտէք այն՝ որ ազատութիւնը անհրաժեշտ է նրանց, որոնք գիտակցում են իրանց իրաւունքներին, նրանց, որոնք իրանց կրթութեան ուժով յաղթահարում են իրանց անձնական կիրքերը...

Ո՛վ թշուառ աշխատաւորներ: Ո՞վ այսպիսի անմիտ, անխիղճ գործերի առաջին զոհեր. ձեզ եմ ուղղում իմ խօսքը: Լսեցէք

«Իմացած եղէք, որ դուք միմեանց արիւնը թափելիս, միմեանց որդոց գլխաբաց փողոցներում շպրտելիս, ձեր «բարեկամները» իրանց տանը նստած՝ զբաղված են լինում կեր ու խումով. յետոյ ցոյց տալու համար իրանց «գթասրտութիւնը» այլևայլ վարմունքներ են ունենում. ձեր «մեծերին» որոնելով՝ ասում են. «ամեն մարդ իւրայիններին թող խրատէ, գուցէ հանդարտվեն»:

Ա՛հ դժբաղդ ազգեր, չուառած, մոլորած աշխատաւորներ, տեսէ՛ք ինչ օրի էք ընկել, որ ձեր և ձեզ «ծառայողների» միջև դեռ գոյութիւն ունի «մեծ», «երեխի» անուանվող անձանց մի դասակարգ, որոնք երբ ձեզ ասեն՝ մի կռուէք, չը պէտք է կռուէք... Եւ տեսէք. երբ կռուեցէք ասեն, պիտի կռուէք: Եթէ այդպէս է, վայ ձեզ: Միթէ չէք հասկանում, որ դուք «նրանց» ձեռքում գործիք էք դառնում: Մինչև այժմ չէք մտածել, թէ ընչեղ «երեխի»-ները ինչ աչքով են նայում ձեզ, աշխատաւորներիդ վրա: Մէկ ուշք դարձրէք անցեալ կռիւներից յետոյ որբ մնացողների, անտէր, անտիրական կանանց դրութեանը: Հարցրէք նրանց որպիսութիւնը, տեսէք ինչ սև օրեր են անցկացրել նրանք հայ-թուրքական ջարդերից յետոյ, և ինչ նզովքներ են կարդում պատճառ հանդիսացողների հասցէին: Սրանից մի տարի առաջ որբերին կշտացնող կանայք, այժմ իրանց սեփական որբերի ձեռքից բռնած չեն իմանում թէ որ «երեխի» դուռը խփեն: Մի տարի առաջ լոյս արձակող օջախի ճրագը այժմ մարած՝ բուերն են այնտեղ վայում...

Ո՛վ հայ և թուրք աշխատաւորներ, տեսնելով սրանց դրութիւնը, խրատվեցէք: Ձեր որդոց և կանանց համար էլ կը հնչեն սև օրերը: Մի խաբվէք մի շարք մարդկանց դասերից: «Յոյս տուող շատ կը լինի, բայց հաց տուող քիչ», խօսքերը մի մոռանաք: Մտածեցէք թէ երբ պէտք է գործ դնել ջանքերն ու մարդասիրութիւնը: Ձեր «մեծերից» ձեզ դարման չը կայ: Դուք ինքներդ փնտռեցէք ձեր դարդերի դարմանը: Ոչխար դառնալով ձեր իրաւունքները գայլերին մի յանձնէք: Նրանք փողով, իսկ դուք անձով հրապարակ էք իջնում: Նրանք իրանց աւելորդից են տալիս, յետոյ դարձեալ ապրում

կեր ու խումի մէջ. իսկ դուք, դժբաղդներ, ձեր կեանքը մի փուչ անմտութեան զոհ էք դարձնում և ազգի սովածների և որբերի թիւը աւելացնում...

Բաւական է ազգի կրած այսքան զուլումը: Հերիք է թափված այդքան անպարտ արիւնը: Ժամանակ է, որ բուրժուաների ցանցից ազատվելով՝ միանաք, և ընդհանուր թշնամու դէմ ելնէք և ձեր իրաւունքները պահանջէք: Թողէք այժմ հրապարակ գան՝ կուրծք ծեծելով ազգի համար հազարներ տուողները. եթէ լաւ է, թողէք նրանք ձեռք քաշեն իրանց անձից... Գոնէ նրանցից մնացած որբերը փողոցներում չեն քաշ գայ և իրանց ձեռքը մեկնի անցնողին...

Իմացած եղէք, որ այդ դէպքում կռուի հրապարակը դատարկ կը մնայ... Երէկ «մըգ, մըգ» գոչելով հազարներ ծախսող «մաշադիները» ու «մուլլաները», այսօր իրանց ամբողջ կարողութիւնն էլ կը տան և հրապարակից կը փախչեն...

Ձեր սանձը «թշնամու» կամ «մեծերի» ձեռքը տալով՝ դուք ձեր ձեռքով ձեզ համար փոս էք փորում.. Պէտք է որ ձեր մեծերը ձեր միջից բաժանվեն. ձեր դարդերից հասկանում են միայն ձեզ նման աշխատաւորները: Պէտք է որ երկու կողմերից նրանք ընտրվեն և ազգի գործերին նայեն, երկու ազգերի դարդի մասին հարց ու փորձ անեն կառավարութիւնից...

Այն ժամանակ դարերով իրար հետ բարեկամաբար ապրող երկու ազգերը ըմբռնելով իրանց սխալները, նորից միասին կը ցանեն և միասին կը հնձեն... Այն ժամանակ միայն գիտակցելով երկու ժողովուրդների ընդհանուր ցաւը, երկու կողմերն էլ ջանք ու աշխատանք կը թափեն դարմանելու այդ ընդհանուր ցաւը:

Թուրք մամուլը այժմ կաւի չափը հնչեցնում է հայ-թուրքական եղբայրասպան ընդհարումների՝ բռնակալութիւնից յետոյ, երկրորդ գլխաւոր դերակատարների, «մեծերի» և «երևելիների»—բէգերի և աղալարների դէմ:

Մենք ուրախ ենք, որ փոքր առ փոքր, բայց յամառօրէն ու հաստատօրէն թափանցում է ճշմարիտ գիտակցութեան լոյսը թուրք ժողովուրդի ուղեղում:

Տ. Զ.

ԷՋՄԻԱԾՆԻՑ

Այսօր, օգոստոսի 30-ի առաւօտեան, մեր պատգամաւորները սեկցիաների բաժանված նոր էին սկսել պարապմունքները, երբ վանքում լուր տարածվեց թէ Թիֆլիսից հեռագիր կայ ժողովը փակելու համար: Լուրը ճշտվեց, [illegible] առապետը ժողովի նախագահի մօտ գալով միաժամանակ յայտնեցին, որ Փոխարքայից հրաման ունեն յայտնելու, որ պատգամաւորական ժողովի պարապմունքները պէտք է դադարեն՝ և անդամներն էլ ցրվեն 24 ժամվայ ընթացքում: Պատգամաւորները չը սխրեցին, մինչև անգամ ուրախացան. նրանք էլ մի այդպիսի բանի էին սպասում, որ «պատուաւոր կերպով» հեռանան, թէ չէ շատ վատ դրութեան մէջ էին, ինչ անելիքը չը գիտէին. արդէն հասկացել էին, որ բան չի դուրս գալու: Եւ ասում են թէ, եթէ այդ հրամանն էլ չը լինէր, այսօր չորս պատգամաւոր մտադիր են եղել ճանապարհ ընկնելու: Թիֆլիս գնացողներից էլ վերադառնալու ձայն չը կար: Ինչ և լինէ, այժմ, արդէն խօսելու կարիք չը կայ, մի մասն էլ վաղը կը գնայ. բարի ճանապարհ:

Այժմ հարց է ծագում. ինչ՞ու եկան այդ մարդիկ, ինչ՞ու գնացին: Ամբողջ երկու շաբաթ ջուր ծեծելուց, փրաղ ու ճռճռան խօսքերից զատ մի բան չը տեսանք: Վանքն ահագին ծախսի տակ ձգեցին, ազգը խառնեցին իրար, միաբանութեան մէջ երկպառակութիւն ձգեցին, ուրիշ ոչինչ. մէջտեղը Տաճատ վարդապետը, այդ գործեք դարած «ընկեր» զոհ գնաց. նրան աքսորում են կայսրութեան սահմաններից դուրս... խեղճ, տխմար մարդ...

Միակ բանը, որով մեր պատգամաւորները կարող են պարծենալ (և պարծենում են) այն է, որ «կազմել» են ծխական դպրոցների ծրագիրը: Դա էլ հօ աշխարհ գիտէ, որ Նախագիծը ամիսներ առաջ պատրաստել էին Թիֆլիսում երկար ջանք ու միջոց գործ դնելով, և պատրաստել էին ոչ «ընկերները», այլ դպրոցական-կրթական գործին քաջ տեղեակ անձինք, որոնցից մի երկուսը «ոչ-պատգամաւոր» եկան այստեղ ու գործը գլուխ հանեցին:

Կաթողիկոսի տրամադրութիւնը լաւ է. նա ուրախ է, որ ազատվեց այդ «խաթից» ու հասկացաւ իր «գլորած քարի» արժէքը: Գնացէք, գնացէք, խղուր էիք եկել. մեզ պէտք էին իսկական պատգամաւորներ, ոչ թէ կուսակցութեան բոստանից հաւաքած «աղաներ»:

Տեսէք, գիւղացիք կուժ են կոտրում ձեր ետևից:

Վ. Ս.

Էջմիածին, 30 օգոստոսի

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԳԻՒՂԱՑՈՒՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈ՞ՒՄ Է ԹԷ ՈՉ

(Ախալքալաքից)

I

Մեզանում կատարված վերջին պատգամաւորական ընտրութիւնները առիթ տուին մեր մամուլին շօշափելու գուցէ տարօրինակ, բայց մեր գաւառի համար խիստ կարևոր մի հարց:

Ոմանք «Մշակի»-ի մէջ այն միտքը յայտնեցին, թէ քաղաքը միշտ շահագործում է գիւղին, ճարպիկ քաղաքացին միշտ պրկում ու կեղեքում է տգէտ ու խեղճ գիւղացուն, իսկ ուրիշ մի քանիսը «Ալիք»-ի մէջ այն միտքը յայտնեցին, որ այդպիսի բան չը կայ, որ քաղաքացու և գիւղացու հարց չը կայ, այլ կայ «աղքատի և հարուստի» հարց, և այլն և այլն:

Մենք, իբրև բնտսկըշնտ գիւղացի, իբրև մի անձնաւորութիւն, որ միջնորդ է հանդիսանում քաղաքակրթված աշխարհի և յետ ընկած գիւղի մէջ, ուզում ենք մեր կարծիքը յայտնել այդ մասին: Թէև մենք վերցնում ենք առանձնապէս Ախալքալաքի գաւառը, բայց համոզված ենք, որ միւս գաւառներում էլ նոյն է և այլ կերպ չէ էլ կարող լինել, որովհետև ամեն տեղ կեանքի նոյն հիւանդ պայմաններն են, ամեն տեղ քաղաքական և տնտեսական նոյն աննորմալ և անարդար սկզբունքներն են տիրապետում:

II

Ամենքիս համար էլ կարծեմ պարզ է, որ երբ մենք ասում ենք «քաղաքացին կեղեքում է», «քաղաքացին խաբում է», «քաղաքացին հարստահարում է», մեզանից ոչ ոք այդ կեղեքող, խաբող և հարստահարողների թւում չէ հաշվում քաղաքում ապրող (մասամբ նոյն իսկ գիւղերից վերաբնակված) չարքաշ դարբինին, «պերվի և վտարոյ գիլդիներին», օրական հացի համար սարուկ դարձած կօշկակարին կամ խարազին կամ առ հասարակ ամեն մի օրական աշխատանքով ապրող արհեստաւորի:

Մեզանից ոչ ոք խիղճ չի թոյլ տայ ասելու թէ այդ խեղճ արհեստաւորները հարստահարող են կամ կեղեքող: Ճիշտ է, կան դէպքեր, երբ խեղճ արհեստաւորներն էլ հանդիսանում են իբրև անուղղակի կեղեքողներ, բայց այդ էլ լինում է միմիայն նրա համար, որ նրանք կեանքի չար բաղդով կապվել են քաղաքի հաստատփոր առևտրականի, այդ կլասիկ հարստահարողի ու կեղեքողի հետ, որ կեանքի այդ թշուառ ու խորթ զաւակներն էլ կարծես ճակատագրի չար հեգնութեամբ դարձել են Թաթոս ու Մաթոս աղաների հարևան, նրանց հետ մի բնտանիքում, միևնոյն քառակուսի վերստի վրա ապրող անդամներ:

III

Եւ ո՞վ է իսկապէս այդ հազարգլխանի (թէև ըստ երևոյթին փոքրիկ) հարստահարիչ «պերվի գիլդի»-ների կթի կովը ու կաթնատուն, ո՞վ է այդ հաստատփոր բաղադների փաթած ու սնւցած ապրանքներն սպառողը.—գիւղացին: Ո՞վ է, որ առաւօտից մինչև երեկոյ գարնանը սայլով, ձիով ու ոտով, իսկ ձմրանը սահնակներով կրում հա կրում այդ վաճառականների 10—15 տարվայ «պառկած» ու արդէն զառամած ապրանքները.—գիւղացին: Ո՞վ է արդեօք Ախալքալաքի տասնեակներով աջ ու ձախ դասաւորված մկիտանների «գոմանի» *) թութունը ու մանրեր արաղը սպառողը.—գիւղացին:

Ո՞վ է վերջապէս փողոցում դարսած փչացած ու հազարաւոր հիւանդութիւնների բուն նեխված մրգերին զոհ գնացողը.—դարձեալ գիւղացին:

IV

Անշուշտ մեզ առարկողներ կը լինեն, որ միայն գիւղացին չէ, այլև քաղաքում ապրող չարքաշ արհեստաւորների դասը. դրա դէմ մենք ոչինչ չունենք, բայց մի բան էս պէտք է աչքի առաջ ունենաք, որ քաղաքում ճարպիկ առևտրականի հարևանութիւնը վայելող արհեստաւորը, այսպէս թէ այնպէս, գոնէ այն չնչին օգուտն է ստանում, որ աշխատում է [illegible] նել և գոնէ տգէտ ու հաստ գիւղացուց աւելի պակաս չափով կեղեքվել: Աւելին կասենք. այդ արհեստաւոր խեղճ դասը ապրելով ճարպիկ վաշխառուի մշտական հարևանութեան մէջ կամայ թէ ակամայ ինքն էլ մասամբ վարակվում է այդ ախտով և ձեռքից եկած ժամանակ օգտվում խեղճ գիւղացու միամտութիւնից: Սակայն սա հարցի չնչին կողմն է, որ մենք նկատում ենք «ի միջի այլոց». կարևորը այն է, որ արհեստաւորը ապրելով այդպիսի հմուտ կեղեքիչների շրջանում դառնում է աւելի զգոյշ, աւելի փորձված և դրա համար էլ նա անհամեմատ աւելի քիչ է ենթակայ աղայի կեղեքմանը, քան այդ բանի մէջ անփորձ ու տգէտ գիւղացին:

V

Սա դեռ հարցի ընդհանուր կողմն էր:

Մասնաւորենք մեր խօսքը և սկսենք հէնց դպրոցներից ու եկեղեցական եկամուտներից, այսինքն այն հարցերից, որոնց կարգադրութեան համար հրաւիրվեց Էջմիածնի համագումարը և որի պատգամաւորների ընտրութեան ժամանակ էլ ծագեցան այս վէճերը:

Ախալքալաքում կայ մի ծխական երկդասեան ուսումնարան. դա շատ լաւ բան է, ոչինչ չունենք ասելու: Ոչինչ չունենք ասելու նաև այն բանի դէմ, որ քաղաքացիք իրանք (այն էլ ի հարկէ մեծ մասամբ ոչ կեղեքող արհեստաւորները) բաւական փող տալիս են այդ դպրոցի ծախսերին. սակայն ասացէք խնդրեմ ինչ հիման վրա Բուլանաշէն *) գիւղի ուսուցչուհու, Գանձայի և Յովհաննէսի և առհասարակ գաւառիս բոլոր ուխտատեղերի եկամուտները յատկացվում են այդ դպրոցին: Չէ՞ որ այդ ուխտատեղերի եկամուտը համարեա բացառապէս գիւղացին է տալիս. ինչի պիտի այդ՝ գիւղացու տուած եկամուտը ծախսվի քաղաքի ուսումնարանի վրա: Ի՞նչ պատճառով և արդարութեան ո՞ր օրէնքի հիման վրա Կարզախի, Սուլդայի, Դադէշի եկամուտներից հազար ռուբլի ստանում է անպայման քաղաքի ուսումնարանը, իսկ գիւղերից ոչ մէկը մի քոռ գրօշ անգամ չէ ստանում: Չէ՞ որ այդ 1000 ր. գիւղացու փողն է, որ գնում է քաղաքացու որդու կրթութեանը:

Ասացէք խնդրեմ գիւղացի երախաները քաղաքի դպրոցներում քանի տոկոս են կազմում, որ բացի թօշակը տալուց, նաև այդ անուղղակի հարկերը վճարում են: Սա հարստահարութիւն չէ հապա ինչ է:

VI

Անցնենք եկեղեցական եկամուտներին:

Ինչպէս են հաւաքվում այդ եկամուտները և ինչպէս ծախսվում: Այդ եկամուտներն են վանական-եկեղեցական հողերի (նաև չնչին քանակութեամբ խանութների) արդիւնքները, պսակադրամը, պտղին, սրբադրամը, հոգեբաժինը, այլն, և այլն:

Ո՞վ է տալիս այս եկամուտները:

Հողային կալուածները բոլորն էլ գտնվում են գիւղացիների ձեռքում, բոլոր արդիւնքը արտադրողները գիւղացիք են. իսկ ինչ դեր են կատարում քաղաքի հաստատփոր «փողրաթչի»ները. կապալով վերցնում են այդ հողերը և իրանց երկրորդական, երրորդական, գուցէ և չորրորդական՝ աւելի «պստլիկ փողրաթչի»-ների միջոցով 5—10 անգամ թանգացրած գիւղացուն տալիս: Լաւ է, չէ: Ուրեմն վանական հողերի արդիւնքը ամբողջապէս գիւղացիք են տալիս, քաղաքացիք այստեղ ոչ միայն օգուտ չեն տալիս, այլ և այդ կալուածներն էլ իրանց կեղեքման առարկայ են դարձնում դարձեալ խեղճ ու կրակ գիւղացու գլխին:

VII

Ո՞վ է տալիս պսակադրամ արդիւնքի ամենամեծ մասը—գիւղացին: Ինչու: Որովհետև նախ գիւղացին շատաւոր է և երկրորդը, որ աւելի ցաւալի է և միանգամայն անարդար, այդ այն է, որ միշտ գիւղացին աւելի բարձր պսակադրամ, աւելի մեծ տուրք է տալիս քան քաղաքացին: Դեռ անցեալ տարի էր, որ ինչքը պաշտի հրամաններ բաժանող քահանան ինձ ասաց, որ «քաղաքում հարուստ պսակվողը համարեա չէ պատահում, եթէ պատահում էլ է 5—6 ռուբլուց աւել չէ վճարում»:

Իսկ գիւղացին ինչ է տալիս. տեսնենք:

Քանի կով ունես, հարցնում է գործակալը:

—Երեք կով, տէր հայր:

—Քանի լուծ եզ ունես:

—Երկու լուծ:

—Օ՜, ուրեմն դու հարուստներից ես: Չէ որ կան նաև մի կով և մի լուծ եզ ունեցողներ, դու պէտք է 6 ր. 50 կ. Էջմիածնի տասը, մի ռուբլի աջահամբոյր, 50 կ. էլ գրագրին: Ուրեմն ընդամենը 8 ռուբլի:

Վայն եկել է խեղճ գիւղացու գլխին, եթէ սխալմամբ իմացան, որ ոչխար էլ ունի, ջրաղաց էլ ունի. էդ արդէն 12—16 ռուբլանոց մուշտարի է:

Բայց մեք մոռանայ, պարոններ, որ այդ 8 ր. վճարող գիւղացու եկամուտը տասն անգամ և աւելի պակաս է միջակ առևտրականի եկամուտից:

VIII

Իսկ ո՞վ է տալիս պտղին, սրբադրամը, հոգեբաժինը և այլն, և այլն:—Դարձեալ գիւղացին: Քաղաքում դրանց անունն էլ չը գիտեն: Պատճառն ինչ է, քաղաքացու հոգին դրախտ գնալ չի՞ ուզի, որ հոգեբաժին չէք տալիս: Պարոններ, եթէ կայ մի հոգի, որը հոգեբաժինով պիտի յաւսայ արքայութիւն մտնել, դա, յամենայն դէպս գիւղացու հոգին չէ:

Ուրեմն ինչ դուրս եկաւ վերևն ասածներից:

Այն, որ թէ կալուածների եկամուտը, թէ պսակադրամը, թէ պտղին ու սրբադրամը, և այլն համարեա բոլորն էլ բացառապէս գիւղացին է տալիս (եթէ չը հաշվենք մի քանի խարխուլ խանութների քրէնը, որը դարձեալ քաղաքի դպրոցն է կլանում):

---

*) «Գոման» մի գիւղ է մեր գաւառում, որ վերջին ժամանակներս գարունի արաղ է քաշում մեծ չափով, այն էլ փչացած արաղ, որը էժան գնով ծախում է քաղաքի մկիտաններին:

*) Վերջին օրերս միայն մասնաւոր կերպով լսեցինք, որ Բուլանաշէնի արդիւնքը հոգև. փարչուժ. կարգադրութեամբ մնում է իրան, գիւղին:

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

(Պ. Յովհաննիսեանի յօդուածի առիթով)

«Զանգ» լրագրի № 17-ում պ. Միք. Յովհաննիսեան մեղադրում է, ի միջի այլոց, ինձ, որ իբր ես և միւս երկու բողոքող պատգամաւորները—այն է պ. Հ. Առաքելեան և Չելեբեջեան—ասել ենք մեր «Կոչի» մէջ. «Դաշնակցութիւնը մտադիր է ձեռք ձգել եկեղեցական—ազգային գոյքերը՝ իր կուսակցական յեղափոխական նպատակներին ծառայեցնելու համար...» Խօսքը ինչպէս երևում է, վերաբերում է «Կոչի» 4-րդ կէտին, իսկ այդ կէտը ձևակերպված է այսպէս. «Ժողովը, աւելի լաւ է ասել—կուսակցական համագումարը, ակներև, առանց ծածկելու, ինչպէս այդ երևում է արտասանած ճառերից, ձգտում է, ի նկատի ունենալով լոկ կուսակցական նպատակները, տիրանալ մեր բոլոր ազգային, կրթական կուլտուրական հիմնարկութիւններին, հանդերձ վանական ու եկեղեցական միջոցներով»:

Եթէ համեմատենք մեր ասածը այն խօսքերի հետ, որ վերագրում է մեզ պ. Յովհաննիսեանը, տարբերութիւն կը տեսնենք նրանց մէջ. խօսքերի տարբերութիւնը, բնականաբար, առաջ է բերում մաքերի տարբերութիւն, որից ընթերցողը ստանում է մի այնպիսի տպաւորութիւն, որպիսին իրականութեան չէ համապատասխանում:

Խոշոր տարբերութիւնները հետևեալներն են. «Կոչի» մէջ ասված է «կուսակցական նպատակների համար», իսկ պ. Յովհաննիսեանը աւելացնում է «յեղափոխական» խօսքը: Յետոյ «Կոչի» մէջ ասված է «կուսակցութիւնը ձգտում է տիրանալ ազգային կրթական—կուլտուրական հիմնարկութիւններին, հանդերձ վանական ու եկեղեցական նիւթական միջոցներով». իսկ պ. Յովհաննիսեան, գուցէ ոչ գիտաւորեալ նպատակով այդ փոխում է և յայտարարում իբր մեր խօսքեր այսպէս. «Դաշնակցութիւնը մտադիր է իր ձեռքը ձգել եկեղեցական—ազգային գոյքերը՝ իր կուսակցական յեղափոխական նպատակներին ծառայեցնելու համար...»: Պ. Յովհաննիսեանը ենթարկում է փոփոխութեան մեր դարձուածքները, համեմում է «յեղափոխական» խօսքով և, վերջապէս տալիս է մեր գրուածքին մի որոշ գոյն, յետոյ գալիս է այն եզրակացութեան, թէ կոչը «մի ծանր ինսինուացիա է, մի անգիտակից պրովոկացիա»:

Զարմանալի մեղադրում էք դուք, պ. Յովհաննիսեան. դուք ձեր սովորական լրջութիւնը կորցրել էք. ձեր մէջ ես սկսել են խօսել կրքեր, և այդ պատճառաւ ձեր եզրակացութիւնը ներկայանում է մի անարժան մեղադրանք:

Եթէ մենք ասել ենք որ, Դաշնակցութիւնը ձգտում է ձեռք առնել ազգային հիմնարկութիւնները, հանդերձ նիւթական միջոցներով, այդ իրաւունք չէր տալիս ձեզ՝ մտցնել մեր ասածի մէջ ձեզանից նոր խօսքեր, դարձուածքներ. և ապա թոյլ տալ, որ մեր պատուի վրա ստուեր ձգվի: Ասացէք խնդրեմ, պ. Յովհաննիսեան, միթէ Դաշնակցութիւնը զբաղված է միմիայն յեղափոխական գործով այս բառի ընդարձակ մտքով, միթէ դուք կարող էք հերքել, որ Դաշնակցութիւնը ձգտում է կրթական—կուլտուրական ասպարէզը նուաճել, միթէ ձեզ յայտնի չէին այն փաստերը, որ Դաշնակցութիւնը աշխատում է, որ մեր դպրոցներն՝ հոգաբարձական և ուսուցչական կազմերը բաղկացած լինեն իր կուսակիցներից: Այդ տեսակ գործունէութիւնը կարելի է անուանել յեղափոխական, ի հարկէ ոչ: Եթէ այդ այդպէս է, ուրեմն ինչ հիմք ունէիք դուք յանցաւոր մեկնութիւն տալ մեր խօսքերին, մանաւանդ որ այդ խօսքերը հնարովի չեն, այլ հիմնված են այն ճառերի վրա, որ կուսակցականները արտասանել են ժողովում: Դաշնակցական ներկայացուցիչները ի դիմաց կազմակերպութեան պնդում էին, որ ազգային կրթական, կուլտուրական հիմնարկութիւնները պէտք է ձեռք առնել, ի հարկէ, նիւթական միջոցների հետ միասին, որ կուսակցութիւնը կարողանայ մտցնել կեանքի մէջ իր ծրագրի «սաղմը», սկսած հնչակաւոր «ֆեդերացիայի» սկզբունքից: Վերջապէս, միթէ ձեզ յայտնի չէ, որ ես կուսակցութեան թշնամի չեմ եղել, այլ նրա պակասութիւնները քննադատող եմ և կը լինեմ, գերադասելով մտքի ազատութիւնը «թայֆայականութեան» անմտութիւնից: Կենտրոնական ժողովում ես օպպօզիցիայի մէջ էի և այդ պահանջում էր իմ պատգամաւորական կոչումը: Ես գտնում էի, որ կուսակցութիւնը, որքան էլ որ մեծ և արժանաւոր լինի, այնուամենայնիւ նա ազգ չէ, իսկ ժողովը, բաղկացած լինելով համարեա միայն դաշնակցական կուսակցականներից, ազգի ներկայացուցչութիւն չէր և, բնականաբար, միակողմանի էր. նրա բռնած ընթացքը, պահանջները էական կէտերով հակառակ էին ազգի կամքին, հասկացողութեանը և իղձերին: Ուստի ես բարոյականապէս պարտաւոր էի բողոքել այդ տեսակ ժողովի դէմ և բողոքեցի:

Ես կատարեցի իմ պատգամաւորական պարտքը: Բայց դժբաղդաբար գտնվեցին մարդիկ, որոնք այստեղ տեսնում էին ինչ որ «չարին միտք»... Ցաւում եմ, որ նոյնիսկ կարող են լինել այդ տեսակ մտածողներ: Յամենայն դէպս, ես կարծում եմ, որ ամեն մի բարեխիղճ ընթերցող, եթէ ի նկատի ունենայ մեր իսկական ասածը և իրողութիւնը, պէտք է համաձայնվի, որ մենք, կոչի հեղինակներս, երբեք ցանկութիւն չենք ունեցել և չէինք կարող ունենալ ասել թէ Դաշնակցութիւնը ձգտում է տիրանալ եկեղեցական վանքական գոյքերին և գումարներին՝ յեղափոխական նպատակներին ծառայեցնելու համար: Ուրեմն անտրամաբանական է անուանել մեր կոչը «ինսինուացիա», «պրովոկացիա». այդ «գիւտը» և անտեղի խօսքերը վերադարձնում եմ իրան, պ. Յովհաննիսեանին, որովհետև նա լաւ գիտէ, որ այդ լիրբ կարելի է խօսել միայն խուժանին գրգռելու համար...

Իմ անցեալս և ներկաս այնքան յայտնի է մեր հասարակութեան, որ ես աւելորդ եմ համարում պաշտպանվել. կարիք չը կայ. թող ինքը հասարակութիւնը դատէ թէ որքան արդարացի է պ. Յովհաննիսեանի մեղադրանքը:

Սամսոն Յարութիւնեան

Սեպտեմբերի 1-ին

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի քանի ամիսներից ի վեր Պարսկաստանի մայրաքաղաքն էլ ալեկոծութեան մէջ է ծփում: Արևելեան դարաւոր անշարժութեան սովորած ժողովուրդն էլ է վերջապէս զարթել և ձգտում է իրան կաշկանդող բռնապետական կապանքներից ազատվել: Ամեն մի ինքնուրոյնութիւն, ամեն մի անհատական ինքնաբերականում խեղդող, ամեն չար ու բարի ճակատագրին վերագրող, ժողովրդին ֆատալիզմի մէջ թմրեցնող խղճի ապականներ էլ են այսօր սահմանադրութեան անունից խօսում և սահմանադրութիւն պահանջում աշխարհի ամենատարանջատներից երանելի պարսկական միապետից, որը շուարած ու գլուխը կորցրած մի քանի մեծ վեզիրներ պաշտօնանկ արեց և «սահմանադրութեան» մանիֆեստներ առաջարկեց:

Այդ «ժողովրդային յաղթութեան» և «յառաջադիմական» ակտի «չափազանց ուրախալի» լուրը, տարածվելով աշխարհի բոլոր անկիւնները, մեծ ցնծութիւն պատճառեց ոչ միայն Պարսկաստանի հպատակներին, այլ և ամբողջ քաղաքակիրթ երկիրներին, որոնք շտապեցին իրանց շնորհաւորութիւններն ու գոհունակութիւնը արտայայտել «սահմանադրական» կարգերի մէջ թևակոխող ժողովրդին ու միապետին: Այդպէս հեշտ և էժան գնով սահմանադրութիւն ձեռք բերելը նոյն իսկ շատ ու շատ ժողովուրդների նախանձը շարժեց, նամանաւանդ նախանձը շարժեց Ռուսաստանի ազատագրութեան համար մարտնչողների, որոնք ահա մօտ երկու տարի է անթիւ ու անհամար զոհեր են ողջակէզ բերում սահմանադրութեան չասածուն, բայց և այնպէս դեռ չեն կարողացել իրականը ունենալ: Այն ինչ եղջանիկ պարսիկները, ընդամենը մի քանի օր, և այն էլ մայրաքաղաքում միայն, շուկան կողպելուց, անգլիական դեսպանատանը «բաստ» մտնելուց և մի քանի հատ մարդկային զոհեր տալուց յետոյ, իրանց սահմանադրութիւնը ստացան և ամեն տեղ իրանց «ժողովրդային» յաղթութեան տօնի ցնծութիւնները կատարեցին:

«Թմրած ու յետամնաց նահապետական Պարսկաստանը արդէն սահմանադրութիւն ունի և նա շատ շուտով կը մշակվի, իսկ քաղաքակրթված ու զարգացած Ռուսաստանը տապալվում է արեան մէջ այդ նոյն սահմանադրութեան համար ու դեռ չէ կարողանում ստանալ»:

Այսպէս են ասում մարդիկ բարի նախանձով ու զարմանքով լցված: Այդ իմաստով խօսեց նաև թէ եւրոպական և թէ ռուսական մամուլը: Այդպէս գրեց դժբաղդաբար և հայկական ու մանաւանդ թրքական մամուլը, որը Պարսկաստանի իրականութեանը աւելի մօտիկ ծանօթ լինելով, աւելի լաւ ճանաչելով նրա կուլտուրական, տնտեսական, քաղաքական և սօցիալական դրութիւնը, զարգացման աստիճանը և պատմութիւնը, աւելի լրջութեամբ ու խորը կերպով պիտի վերաբերվէր այդ բոլոր «ազատագրական» շարժումներին և աւելի ճիշտ կերպով պիտի գնահատէր նրանց, քան այդ արեց Պարսկաստանի իրականութեանն ու պատմութեանը անտեղեակ եւրոպական ու ռուսական մամուլը:

Եւ հէնց այդ տեսակէտով մենք ցանկանում ենք ներկայ յօդուածով վերլուծել ու պարզել «Մշակի» ընթերցողներին Պարսկաստանի թէ «ազատագրական» շարժումների բնաւորութիւնը և թէ նրանց ձեռք բերած կամ ձեռք բերելիք սահմանադրութեան էութիւնը, ցոյց տալով որ Պարսկաստանի սահմանադրութիւն ասելով երբեք չը պէտք է սահմանադրութիւնը հասկանալ այն մտքով ու իմաստով, ինչպէս որ ընդհանրապէս ընդունված է հասկանալ, երբ խօսք է լինում առհասարակ սահմանադրութեան մասին: Պարսկաստանի «ազատագրական» համարվող ներկայ ժողովրդային շարժումները և պահանջված սահմանադրութիւնը բոլորովին նոյն առաջադիմական, պրոգրէսիվ պատմական պրօցէսը չեն, ինչ են, օրինակի համար, Ռուսաստանի շարժումներն ու պահանջած սահմանադրութիւնը, և ինչ եղել են XIX-դ դարի ընթացքում տեղի ունեցած քաղաքակիրթ երկիրների յեղափոխական շարժումներն ու ձեռք բերված սահմանադրութիւնները: Պարսկաստանի շարժումները, ընդհակառակը, բոլորովին ռեգրէսիվ, յետադիմական բնաւորութիւն են կրում, և նրանց պահանջած «սահմանադրութիւնն» էլ, եթէ միայն նա կարողանայ իրականանալ և երկար տևողականութիւն ունենալ, ոչ թէ ժողովրդին ազատութիւններ պարգևող մի ակտ կը լինի, ինչպէս լինում են սովորաբար հասկացված սահմանադրութիւնները, այլ դա կը լինի բռնակալական մի նոր կուռ շղթայ ժողովրդին խեղդելու համար, միայն թէ այս անգամ մի այլ ձևով պատրաստված:

Այս մեր ասածը իւրաքանչիւր ընթերցողի համար պարզ և հասկանալի դարձնելու համար, մենք կարևոր և անհրաժեշտ ենք համարում նախ այստեղ քննել ու վերլուծել, թէ ինչ բան է ընդհանրապէս սահմանադրութիւնը, ինչումն է կայանում նրա էութիւնը, որպէսզի աւելի պարզ և հասկանալի լինի, թէ ինչու բոլոր սահմանադրական երկիրներում միևնոյն սահմանադրութիւնը գոյութիւն չունի և ինչու դիցուք ֆրանսիական սահմանադրութիւնը տարբերվում է գերմանականից, գերմանականը աւստրիականից, աւստրիականը ռումինականից և այլն: Եւ ինչու մի երկրի համար ասում են, թէ նա աւելի լայն ու ընդարձակ սահմանադրութիւն ունի, իսկ միւսը աւելի նեղ ու սահմանափակ սահմանադրութիւն ունի: Սահմանադրութիւնը, նրան պայմանաւորող հանգամանքներն ու նրա էութիւնը ընդհանրապէս քննելուց յետոյ, մեզ համար այլևս շատ հեշտ կը լինի ճշտութեամբ բնորոշել Պարսկաստանի սահմանադրութիւնը և ըստ արժանոյն գնահատել նրան, երբ նամանաւանդ մի ընդհանուր ակնարկ կը գցենք այդ երկրի տնտեսական, քաղաքական ու սօցիալական իրականութեան վրա:

Արդ՝ ինչ բան է սահմանադրութիւնը, ինչի՞ մէջ է կայանում նրա էութիւնը:

Ընդունված է ասել, որ սահմանադրութիւնը մի երկրի հիմնական օրէնքներն են: Եւ իսկապէս այդպէս էլ է, որովհետև նա տարբերվում է միւս ոչ-հիմնական օրէնքներից այն բանով, որ ամեն տարի կամ նոյնիսկ ամեն ամիս շատ նոր ու նոր օրէնքներ են մշակվում և յայտարարվում մի որևէ պետութեան մէջ, հին օրէնքները միշտ փոփոխութիւնների են ենթարկվում, այն ինչ ամեն տարի և ամեն ժամանակ չէ կարելի սահմանադրական օրէնքներ մշակել և ոչ էլ կարելի է նրանց յաճախ փոփոխութիւնների ենթարկել: Բացի դրանից, ոչ-սահմանադրական, հասարակ օրէնքները մշակվում ու հրատարակվում են շատ խաղաղ կերպով, առանց աղմուկի ու ցնցումների, այնինչ ամեն մի պետութեան սահմանադրական օրէնքները փոփոխութեան ենթարկելու ժամանակ ամբողջ երկիրը խռովութեան մէջ է ընկնում, մեծ ժողովրդային շարժումներ են տեղի ունենում և նոյնիսկ գործը արիւնհեղութեան է հասնում: Եւ հէնց այդ սահմանադրական օրէնքների փոփոխութիւնն է, որ սովորական ոճով կոչվում է յեղափոխութիւն: Քանի որ մի երկրի սահմանադրութիւնը կամ հիմնական օրէնքները փոփոխութեան ենթարկված չեն, դեռ չէ կարելի ասել, թէ այդ երկրում յեղափոխութիւն է տեղի ունեցել, թէկուզ այդտեղ շատ էլ ապստամբական շարժումներ տեղի ունեցած լինեն ու շատ էլ մարդկային զոհեր նահատակված լինեն: Բայց և պատահում է, որ մի որևէ երկրում առանց մի կաթիլ արիւնի էլ յեղափոխութիւն է կատարվում, երբ իշխող կառավարութիւնը, կամ աւելի ճիշտ է ասել՝ իշխող դասակարգը, նախազգալով իր կրելիք պարտութիւնը, շտապում է համաձայնութեան գալ իր հակառակորդ դասակարգերի հետ և, մի քանի էական զիջումներ անելով, համաձայնում է երկրի սահմանադրութիւնը կամ հիմնական օրէնքները փոփոխութիւնների ենթարկել:

Այս բոլորը ասելով հանդերձ, ի հարկէ, մենք դեռ ևս չը պարզեցինք, թէ ինչ բան է սահմանադրութիւնը: Դա մի պետութեան կամ երկրի հիմնական օրէնքներն են: Սակայն ինչ են նշանակում հիմնական օրէնքներ. ինչով են նրանք պայմանաւորվում, ումից են նրանք թելադրվում, ինչու նրանք զանազան երկիրներում տարբեր են: Եթէ, օրինակի համար, ինչպէս Ֆ. Լասալն է ասում, մի որևէ երկրում մի այնպիսի անհաւատալի հրդեհ պատահի, որը լափի, ոչնչացնի այդ երկրի բոլոր պետական արխիվներում, դատաստանական հիմնարկութիւններում, գրադարաններում ու գրավաճառանոցներում գտնված բոլոր օրէնսդրական գրքերը, հիմնական օրէնքների բոլոր պատճէնները, այդ պարագայում կարող է արդեօք այդ երկրի կառավարութիւնը մի նոր, բայց բոլորովին այլ սահմանադրութիւն կամ հիմնական օրէնքներ խմբագրել ու գործածութեան դնել, քան այն, ինչ նա ունէր հրդեհից առաջ: Դիցուք այդպիսի մի հրդեհ պատահած լինի Բուլղարիայում, Աւստրիայում և կամ նոյնիսկ Ֆրանսիայում: Կարող են արդեօք այդ երկիրների վարիչները վերցնել ու ընդօրինակել դիցուք անգլիական կամ մի այլ երկրի սահմանադրութիւնը և ասել ժողովրդին՝ «եկէք, այսուհետև այսպիսի սահմանադրութեամբ կառավարվենք»:

Եթէ մենք իդէալիստական աշխարհահայեցողութեամբ մտածող մարդկանց ու դրանց ասածները թարս ու շիտակ կրկնող դաշնակցական թէօրէտիկներին այդպիսի մի հարց տանք, նրանք իսկոյն դրական կերպով կը պատասխանեն, հիմնվելով այն սխալ հայեցակէտի վրա, թէ աշխարհի երեսին ամեն տեսակ չար ու բարի մարդկանց կամքից ու քմահաճոյքից է կախված: Եթէ մարդիկ կամ ժողովուրդները դժբաղդ ու թշուառ են, եթէ նրանք վատ կառավարչական ձևեր, վատ քաղաքական ու հասարակական կազմակերպութիւններ ու կարգեր ունեն, այդ միմիայն նրանց մի մասի անհասկացողութեան և միւս մասի չարակամութեան ու կամայական քմահաճոյքի արդիւնք են: Մինչդեռ այդ հնացած հայեցակէտը այժմ այլ ևս ոչ մի լուրջ կրիտիկայի չէ դիմանում և սօցիալական գիտութիւնները վաղուց արդէն անհերքելի կերպով ապացուցել են, որ մարդկային պատմութիւնն ու քաղաքական և հասարակական կարգերը ոչ թէ սրա ու նրա քմահաճոյքով են ղեկավարվում ու դասաւորվում, այլ նրանք էլ ունեն իրանց յատուկ ու որոշ օրէնքներն ու կանոնները, ինչպիսին ունի, օրինակի համար, կենդանաբանութիւնը կամ քիմիան:

Եւ ճիշտ այդ օրէնքների ու կանոնների հիման վրա երբեք չէ կարելի դիցուք ֆրանսիական տիպը անգլիական կամ գերմանական սահմանադրութեամբ ղեկավարվել, ինչպէս և չէ կարելի այս վերջիններում ֆրանսիական կամ մի այլ սահմանադրութիւն ընդունել տալ: Եւ դա պարզապէս այն շատ հասարակ պատճառով, որ մարդիկ մի երկրի կամ պետութեան հիմնական օրէնքները կամ սահմանադրութիւնը ոչ թէ օդի միջից են վերցնում և կամ իրանց խելքին զոռ տալով են ստեղծում, այլ պետութեան մէջ արդէն գոյութիւն ունեցող իրական (ռէալ) ոյժերի յարաբերութիւնները, տալով այդ ոյժերից իւրաքանչիւրին, իրական կեանքի մէջ իր արդէն ունեցած զօրութեան համապատասխան իրաւունքների և պարտաւորութիւնների սահմանները:

Հէնց այդ պատճառով էլ գիտութեան մէջ ընդունված է ասել, որ մի երկրի սահմանադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ երկրում գոյութիւն ունեցող իրական ոյժերի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների արտայայտութիւնը: Նրա համար էլ սահմանադրութիւնը կոչվում է հիմնական օրէնքներ, որ նա հիմնված ու կառուցված է անպատճառ կեանքի մէջ գոյութիւն ունեցող իրական ոյժերի վրա: Եւ քանի որ այդ ոյժերը նրանց յարաբերութիւնները կեանքի մէջ չեն փոխված ու այլ կերպարանք, այլ դասաւորութիւն ստացած չեն, քանի որ նրանց յարաբերութիւնները մնում են նոյնը, սահմանադրութիւնն էլ չէ կարող փոխվել և չէ կարող ուրիշ կերպ լինել, քան նա է եղել: Իսկ այդ ոյժերի և դրանց յարաբերութիւնների փոխվելով, եղած սահմանադրութիւնը կամ, աւելի ճիշտ կը լինի ասել, թղթի վրա գրված հիմնական օրէնքները, այլ ևս անհամապատասխան դառնալով իրական կեանքին, մի տեսակ կաշկանդիչ են հանդիսանում պետութեան մէջ, որի համար առաջին ցնցումներ, ժողովրդային շարժումներ ու ապստամբութիւններ են առաջանում, որոնց միակ նպատակը լինում է այն, որ թղթի վրա եղած սահմանադրութիւնն էլ փոփոխութեան ենթարկվի և կրկին համապատասխանութեան մէջ դրվի կեանքի մէջ արդէն փոփոխված իրական ոյժերի ու նրանց յարաբերութիւնների հետ: Այլ խօսքերով, մի երկրի յեղափոխութիւնը նախ շատ դանդաղ կերպով, տասնեակ և աւելի տարիների ընթացքում կատարվում է ներսից, կեանքի մէջ, և այդ միայն հրապարակ ձևով նա դուրս է ժայթքում ու հրամայողական եղանակով պահանջում իրան օրինական սանկցիա տալ, գրաւոր օրէնքների՝ սահմանադրութեան վերածել:

Ինչպէս որ ձուի մէջ եղած սաղմը զարգանալով և թռչուն գոյանալով կոտրում է իրան դեռ երէկ վտանգից պաշտպանող, իսկ այսօր մահ սպառնացող կեղևը և լոյս աշխարհ դուրս գալիս, այնպէս էլ պետութեան մի անցեալներում սաղմի մէջ եղած ու անփոփոխ դատ հասարակական ոյժերը, հետզհետէ զարգանալով ու զօրութիւն ստանալով, իրանց համար աճելու և աւելի ևս փարթամանալու նոր պայմաններ, նոր հիմնական օրէնքներ են պահանջում: Եւ այդ օրէնքները, այդ սահմանադրական օրէնքները պէտք է բոլորովին համապատասխան ու ներդաշնակ լինեն զարգացած և նոր առաջ եկած հասարակական ոյժերին, այլապէս նրանք չեն կարողանայ իրանց յետագայ զարգացման համար նոր ընթացք ստանալ: Եւ պետութիւնը չի կարողանայ իր խաղաղ էվօլիւցիայի շրջանի մէջ մտնել, մինչև որ երկրի հիմնական օրէնքները համապատասխան չը դառնան իր մէջ արդէն գոյութիւն ստացած իրական ոյժերին ու դրանց իրական յարաբերութիւններին: Ինչպէս որ աճող և մեծացող օրգանիզմը իւրաքանչիւր տարի իր հասակին համաձայն նոր շապիկ է հագնում, այնպէս էլ իւրաքանչիւր պետութիւն իր ներքին իրական ոյժերին համապատասխանող հիմնական օրէնքներ, սահմանադրութիւն պիտի ունենայ անպայման: Եւ որովհետև ամեն մի երկրի կամ պետութեան մէջ եղած իրական ոյժերը միատեսակ, նոյն չափով ու նոյն աստիճանի զարգացած չեն և նոյն յարաբերութիւնները չունեն, ուստի և նրանց սահմանադրութիւնը, հիմնական օրէնքները էլ միևնոյնը չեն և չեն կարող լինել: Ահա հէնց այդ պատճառով էլ չէ կարելի դիցուք գերմանական սահմանադրութիւնը Ֆրանսիայի վզին փաթթել, անգլիականը Գերմանիայի վզին և այլն:

Բայց ինչումն են կայանում երկրի իրական ոյժերը ու նրանց յարաբերութիւնները: Որոնք են նրանց պայմանաւորող հանգամանքները:

Պարզենք այդ հարցն էլ մի քանի օրինակներով:

(Կը շարունակվի)

Խ.-Ազատ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սօկրատ և իւր կինը» Թէօդոր դը Բանվիլի, թարգմ. Ա. Եղեկեանի, փոքրադիր 53 երես, գինը 20 կ.

Դա կատակերգութիւն է մի արարուածով՝ կատակերգութիւն կլասիքական կեանքից, մշակված գրական մի գործ:

Նիւթը վերցված է Սօկրատի կեանքից: Մեծանուն յոյն փիլիսոփան այդ կատակերգութեան մէջ շօշափում է կանանց հարցի մասնիկը:

Կանայք գանգատվում են Սօկրատին, որ իրանց ամուսինները սառել են ընտանիքը և վազում են դէպի փիլիսոփայինը: Սօկրատը պատասխանում է, թէ կինը պէտք է կարողանայ ընկեր լինել ամուսինին նաև նրա հոգեկան և բարոյական պահանջմունքերի համար:

Կարող ես, չէ՞, Լօկ մարմինը զարդարել
Բարբարոսի է բանս: Ուստի որպէս գի՛
Ամուսինդ քեզի միայն հետևի
Հոգիդ նոյնպէս տես զարդարես, այն ժամ նա
Քեզ կը լսէ:

Թէօդոր դը Բանվիլի կատակերգութիւնը աւելի ընթերցանութեան համար է նշանակված, քան ներկայացման համար: Կարելի է նրան նաև ներկայացնել, ինչպէս ներկայացվում են Ռօստանի նոյնատեսակ հեղինակութիւնները, բայց դրա համար պահանջվում է, որ դերասանները առանձին հոգ տարած լինեն գործի կատարելութեան վրա:

Եղեկեան, որ տուել է կլասիքական գրուածքների մի քանի թարգմանութիւններ, յայտնի

է իր հօրը, հարուստ բայց և խրթին լեզուով։ Ներկայ աշխատութիւնը ազատ է խրթնութիւնից, բաւական մօտեցրած է խօսակցական մեր լեզուին։

Թարգմանիչը գրքոյկի վերջում զետեղել է կարևոր ծանօթութիւններ յունական մի քանի անունների բացատրութեան համար։

Գրքոյկը տպված է Վենետիկում։

Ա. Փ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Օգոստոսի 30-ին

«Դաշնակցական» կոչվող «յեղափոխական» կօնգլօմերատի ամեն տեսակ խայտառակութիւնները տեսել ու լսել ենք, և այդ բոլորին սովորել, բայց այն, ինչի որ ականատես եղաւ Բագուի ազգաբնակութիւնը օգոստոսի 25—26-ի երկօրեայ ընդհանուր գործադուլի ժամանակ՝ խոստովանում ենք, մենք երբէք չէինք սպասում։

Վերջին ժամանակներս մեր կապիտալիստները, Թէև ու Թիկունք առած ըէակցիայի յաղթանակից, սկսել էին ամեն տեսակ ճնշումներ գործ դնել բանւորների վրայ։ Զը կարողանալով տանել այդ բոլոր ճնշումները, բանւորները տեղ-տեղ դիմում են մասնաւոր գործադուլների, դնելով իրանց տնտեսական պահանջները։ Կապիտալիստները ոչ մի պահանջի բաւարարութիւն չեն տալիս, համաձայնւած լինելով, որ բանւորները վերջնվերջոյ քաղցից ստիպված՝ պէտք է համաձայնըվեն առաջվայ պայմաններով աշխատել։ Սակայն կազմակերպված բանւորների կողմից նիւթական և բարոյական աջակցութիւն ստանալով, գործադուլ բանւորները յամառ կերպով շարունակում են գործադուլը երկու ամսից աւելի։

Տեսնելով, որ իրանց յոյսերը ի դերև են ելնում, կապիտալիստները դիմում են գեներալ-նահանգապետի օգնութեանը։ Կարգադրութիւն է արվում, որ եթէ երեք օրվայ ընթացքում բանւորները գործի չը գնան, պաշտօնից զրկվելու են և էտապով ուղարկվելու հայրենիք։ Սակայն այդ միջոցն էլ չէ օգնում. գործադուլը շարունակվում է։ Եւ ահա սկսվում են բանւորների մէջ կալանաւորութիւնները. երկու երեք օրվայ ընթացքում կալանաւորում և բանտարկում են մի քանի հարիւր բանւորներ։ Բանւորական շըրջաններում բռնութիւնները սաստկանում են։ Կապիտալիստները սպառնում են փակել գործարանները և փողոց շպրտել հազարաւոր բանւորներին։ Սկսվում է սոսկալի ըեպրեսիաների մի շարք։

Համբերութեան բաժակը լցվում է. բանւորութիւնը յուզվում է և սկսում են բողոքի արտայայտութեան նշաններ երևալ նրանց մէջ։ Որպէս զի բանւորների կողմից աւելի կտրուկ միջոցների տեղիք չը տրվի, Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցութեան տեղական կօմիտէն, իբրև բողոքի արտայայտութիւն, յայտարարում է ամսիս 25 և 26-ին երկօրեայ ընդհանուր խաղաղ գործադուլ։

Բանւորութիւնը ուրախութեամբ ընդառաջ է գնում այդ յայտարարութեանը և գործադուլը սկսվում է 25-ի առաւօտեան։

Կարծես թէ մոգական փայտի նշանով կանգնում է ձիաքարշը, փակվում են խանութները, հիւրանոցներն ու ճաշարանները, կանգ են առնում գործարաններն ու տպարանները։ Շարժումը անցնում է Սև-Քաղաք, Բալախանի, Բիբի-Էյբաթ, սկսում են կամաց-կամաց կանգնել նաւթային գործարաններն ու նաւթահանքերը։ Ժամը 11-ին արդէն համարեա թէ կանգ առած են լինում արդիւնաբերական և առևտրական հիմնարկութիւնների 7/8 մասը, երբ բոլորովին անսպասելի կերպով մի նոր հանգամանք արգելք է հանդիսանում գործադուլին. «բանւորական շահերի պաշտպան», «սօցիալիստ» Դաշնակցութիւնը, ոչ թէ միայն չէ աջակցում գործադուլին, այլ մինչև անգամ թշնամական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի նա, զուտ կուսակցական նեղ միտումներից դրդված։ Կէսօրվայ մօտ, չէրքէզակաւոր և մեծ փափախաւոր դաշնակցական զինւորները, կօմիտէի կարգադրութեամբ, սկսում են խումբ-խումբ շրջել խանութից խանութ պահանջելով բացել խանութները, սպառնալով հակառակ դէպքում կտրել գըլխները և բացել։ Նոյնը կատարվում է և նաւթային շրջանում. արդէն գործադուլ արած դաշնակցական բանւորները հրաման են ստանում «կազմակերպութիւնից» իսկոյն անել գործի դիմել... Եւ նրանք ստիպված... դիմում են։ Գործադուլը մինչև վերջը աջող տանում են ռուս և թուրք բանւորները և հայ բանւորների մի մասը (ոչ դաշնակցական)։

Գործադուլի սկզբում փողոցներում սկսւցին երևալ մեծ մաուզերներով և բրաունինգներով զինված խուլիգաններ, բայց տեսնելով, որ իրանց անելիքը բաւականին աջող կերպով անում են «սօցիալիստ» դաշնակցականները, չքացան այնպէս աննկատելի կերպով, ինչպէս որ երևան էին եկել։

Ահա այս էլ Հ. Յ. Դաշնակցութեան «սօցիալիստական» գործունէութեան փինալը։

Ագգէ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 2-ին

Ի լրումն օգոստոսի 31-ի մեր հաղորդած լուրի, ցաւօք սրտի, դէպքի տպաւորութեան տակ, գրում եմ իսկական իրողութիւնը։ Սխալ դուրս եկան ժողովրդի մէջ պտտող այն լուրերը, թէ ճանապարհորդներն ուսանողներ են եղել, թէ Թուրքերի յարձակումների են ենթարկվել, և այլն և այլն։

Ութ ճանապարհորդներն եղել են սրիկաներ։ Նրանք մտածել են մի դիւական ծրագիր, որ և իրագործեցին։ Խարբերդական ձևով վարձում են կառքերը, տանում են Տիգրա. Ղօշավանք, և Բէշ Քիլիսա դեռ չը հասած, նստում են մի ջրի ափին ճաշելու։ Միամիտ կառապանները ձիերին կեր տալուց յետոյ նստում են նրանց հետ ուրախանում, խօսում հանաքներ անում, և երբ սեղանը վերջանում է, ձիերը պատրաստում, կառքերը լծում են, որ ճանապարհը շարունակեն։ Ահա հէնց այդ րոպէին տեղի է ունենում ամենազարհուրելի ոճիրը. այդ 8 սրիկաները հաւաքվում են մի տեղ և յանկարծ միապաղաղ գնդակների կարկուտ Թափում թշուառ կառապանների վրայ և տեղն ու տեղը երկուսին էլ սպանում, վրաները մի քիչ քար ածում և կառքերը վերցնելով հեռանում։ Փոխելով ճանապարհը, փոխանակ Բէշ-Քիլիսա գնալու, նրանք ուղևորվում են դէպի Կզլչախչախ և նրանցից մի մասը մնում է այդ կողմերը, իսկ մի մասը ձի նստելով գնում են Ալէքսանդրոպոլ ձիերը և կառքերը ծախելու։

Գիւղացիք նկատելով ինչ որ տարօրինակ բան, յայտնում են տեղային իշխանաւորին, որը այդ սրիկաներին բանտարկում է։ Հեռագիր է խփվում Ալէքսանդրոպօլ, որտեղ ձերբակալում են և նրանց։ Հարց ու փորձից բանը պարզվում է. գտնում են դիակները, հեռագիր է տրվում Կարս, հաւաքվում են թշուառ կառապանների բարեկամները, գնում են դէպքի տեղը և այսօր առաւօտեան ժամը 10-ին դիակները բերին Կարս։ Անօրէնները շատ անգթաբար են վարվել խեղճ մարդկանց հետ։ Այժմ ամեն մի ինքնաճանաչ հայ ամօթահար եղած՝ չէ համարձակվում ուղղակի նայել մեր հեզ, կուլտուրական, խաղաղ մօլոկան դրացիների երեսին։ Ասացէք խնդրեմ ինչ կանէինք մենք, եթէ այս եղեռնագործութիւնը մեր վերաբերմամբ լինէր նրանց կողմից. հաւատացէք, որ շատ Թանգ կը նստէր նրանց վրայ, բայց այդ բարոյապէս մեզանից բարձր կանգնած մօլոկան դրացիները երբէք վրիժառութեան մասին չեն մտածում. վրէժխնդրութիւնը Թողնելով Տիրոջը, նրանք հեզ և խոնարհ կերպով մորմոքում են իրանց ծանր վիշտը, միշտ փառք տալով Տիրոջը, որ իրանց համբերութիւն տայ։

Մ. Ն. Ոսկանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք շարունակ ստանում ենք տպագրութեան համար պատճէններ այն բողոքների— հեռագրական և գրաւոր—, որոնք զանազան քաղաքներից և աւաններից օգոստոսի 27—30-ին ուղարկվել են Էջմիածին, Կաթողիկոսին, Էջմիածնի համագումարի ատենձութիւնների դէմ, բազմաթիւ ստորագրութիւններով։ Հարկ ենք համարում յայտնել, որ անկարող ենք տպագրել այդ բողոքները, մանաւանդ իրանց հարիւրաւոր ստորագրութիւններով, քանի որ ժողովը արդէն փակվեց

—

Մեզ հաղորդում են, որ աքսորված Տաճատ վարդապետի փոխարէն Կաթողիկոսի դիւանատան կառավարիչ է նշանակվել Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեան։

—

Հայոց ուսուցչական միութեան խորհուրդը հեռագրել է Էջմիածին Կաթողիկոսին. «Դըպրոցական տարին սկսվեց և ամեն տեղ բացվում են ծխական դպրոցները, սակայն ցայժմ յայտնի չէ թէ ինչ ծրագրով ու կանոններով պէտք է ղեկավարվեն դպրոցական վարչութիւնները։ Ի դիմաց հայ ուսուցչութեան խոնարհաբար խնդրում ենք շուտով մի կարգադրութիւն անել ծրագրի և դպրոցական կանոնադրութեան վերաբերմամբ, գոնէ մի տարվայ համար, որպէս զի կամակայութիւնների առաջն առնվի»։

—

Էջմիածնից մեզ գրում են. Քիշինևի հայոց առաջնորդ Ներսէս Խուդավերդեան արքեպիսկոպոսի և Հերթեւցեան Ներսէս քահանայի մէջ ծագած վէճը, որ այնքան մեծ գժտութիւններ առաջ բերեց Բեսարաբիայի Թեմի հայերի մէջ, իր լուծումը գտաւ նրանով, որ Թէօդօսիայի հայոց եկեղեցիների քահանան, այդ Հերթեւցեանը, Ներքին գործերի մինիստրի՝ Ստօլիպինի առանձին գրութեամբ յանուն Վեհափառ Կաթողիկոսի, պէտք է տեղափոխվի մի այլ թեմ քահանայագործութեան համար։

—

Մարսէյլի «Արմենիա» Թերթը հաղորդում է, որ նորերս վախճանված, իշխան Գուիտօն Լուսինեան (Ամբրոսիոս Գայֆայեան) Թողել է մի ձեռագիր աշխատութիւն, այն է իր Փըրանսահայ ընդարձակ բառարանի հայերէնից-Ֆրանսերէնը, որ մահվանից առաջ յանձնել է «Բանասէր» հանդէսի խմբագիր Կ. Բասմաջեանին լրացնելու Թերատը և հրատարակելու։

—

«Кавказъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը. «Թիֆլիսում հրատարակվող «Զանգ» լրագրի № 6-ում տպված էր մի նկատողութիւն, որի մէջ ի միջի այլոց ասված էր, որ «Էջմիածնի կենտրոնական ժողովը բաղդ ունեցաւ ստանալու Երևանի գեներալ-նահանգապետ Եացկևիչից շնորհաւորական հեռագիր»։ Ճշմարտութիւնը վերականգնելու համար Երևանի ժամանակաւոր գեն.-նահանգապետը հաղորդել է Փոխարքայի դիւանատանը ամենայն հայոց Պատրիարք-Կաթողիկոս Մըկրտչից ստացված նամակի և իր՝ գեներալ-նահանգապետի Կաթողիկոսին ուղարկած հեռագրի բովանդակութիւնը։ Կաթողիկոսի նամակը պարունակում է իր մէջ հետևեալը. «Ձերդ գերազանցութիւն, Վլադիմիր Ալեքսանդրովիչ! օգոստոսի 15-ից Էջմիածնի Մայր-Աթոռի վանքում տեղի կունենան եկեղեցական ներկայացուցիչների ժողովի նիստերը, որպիսին հրաւիրված է իմ կողմից լուծելու մի քանի անյետաձգելի խնդիրներ, որոնք կապ ունեն 1-ն օգոստոս 1905 թ. Բարձրագոյն ուկազով հայոց եկեղեցուն շնորհած իրաւունքի հետ—անօրինելու դպրոցները և եկեղեցական կալւածքները։ Ներկայ եկեղեցական համագումարի մասին օգոստոսի 3-ին № 926 գրութեամբ իմ կողմից յայտնված է ի գիտութիւն Նորին Մեծութեան Փոխարքային։ Ես միանգամայն լիայոյս եմ, որ ներկայ ժողովը, որը հրաւիրված է քննելու բացառապէս եկեղեցական խնդիրներ, ոչ մի կերպ սպառնական չէ կարող լինել հասարակական կարգապահութեանն ու անդորրութեանը։ Առաքում եմ Ամենաբարձրեալին իմ ջերմ աղօթքները, և թող օրհնէ Նա ձերդ գերազանցութեան օրերը՝ պարգևելով երջանկութիւն և երկար տարիներ։ Մկրտիչ Կաթողիկոս ամենայն հայոց. 12 օգոստոսի 1906 թ. Էջմիածին»։ Ի պատասխան այդ նամակի գեներալ Եացկևիչ օգոստոսի 15-ին ուղարկում է Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը. «Ձեր Վեհափառութեան հրաւիրած պատգամաւորների համագումարի բացման օրը—լուծելու համար այն անյետաձգելի հարցերը, որոնք կապ ունեն դպրոցները և եկեղեցական կալւածքները կառավարելու վերադարձված իրաւունքի հետ, — մատուցանում եմ Ձեզ իմ անկեղծ բարեմաղթութիւնը, որ համագումարը աջողութեամբ կատարէ իրան յանձնված մի այդքան լուրջ գործ։ Չեմ կասկածում, Ձեր վեհափառութեան հետ միանալով, որ պատգամաւորների ժողովը միանգամայն խաղաղ կերպով կըսկսէ և կաւարտէ իր զբաղմունքները, և այդպիսով կարդարացնէ Ձեր Վեհափառութեան նրա վրայ ունեցած վստահութիւնը»։ Այս ապացուցագրերից երևում է, որ ժամանակաւոր գեներալ-նահանգապետը շնորհաւորական մտքով չէ վերաբերվել «Կենտրոնական Ժողովին»։

—

Թիֆլիսի քաղաքացի Յովհաննէս Խ. Մալաքեանը ուղարկել է քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ջերքեզովին իր կտակը, որով նա նուիրում է Թիֆլիս քաղաքին ժողովրդի լուսաւորութեան նպատակով իրան պատկանող անշարժ կայքերը և դրամագլուխ տոկոսները, ընդամենը մօտ 100 000 ռուբլի։ Կտակողի կամքը պէտք է կատարվի նրա մահից յետոյ։

—

Սեպտեմբերի 2-ին, երեկոյեան մօտ ժամը 6-ին, Ֆոմօյ և Օբչչեստվեննի փողոցների անկիւնում Թիֆլիսի վաճառական Գէորգի Զումուխաձէին մի անյայտ չարագործ դանակով փորից ծանր կերպով վիրաւորել է։ Վիրաւորվածը հիւանդանոց հասցնելուն պէս մեռել է։

—

Ստացանք հետևեալ գրքոյկները. 1) Ա. Անենսկայայի «Հանրապետութիւն», Թարգմ. Ս. Տէր-Անանեանի, գինն է 5 կոպ., 2) Ա. Բեբէլի «Քրիստոնէութիւնը և Սօցիալիզմը», հրատարակութիւն Յովհ. Դաւթեանի, Թարգմ. Ս. Տէր-Անանեանի, գինն է 10 կոպ., 3) Ա. Ահարոնեանի պատմութիւններ «Кусочекъ хлѣбца», «Пѣтухъ», Թարգմանութիւն հայերենից Վ. Բարեանի, հրատարակութիւն Յով. Դաւթեանի, գինն է 10 կոպ.։

—

Շուտով կը վերջանայ գեներալ Միշչենկոյի բժշկութիւնը, որից յետոյ նա կը գայ Թիֆլիս, ուր, ինչպէս լսել է «Пет. Газ.»-ն, նա ստանալու է Կովկասի փոխարքայի զինւորական մասի օգնականի պաշտօնը, որ մինչև այժմ վարում էր գեներալ Մալաման։

—

Սեպտեմբերի 1-ի երեկոյեան Սօլոլակում բռնել են չորս ագիտատորների, որոնք պատրաստում էին գեղջկական գործադուլ։

—

Գործադուլ են արել Թիֆլիսի կառապանների բանւորները, ներկայացնելով իրանց տէրերին մի շարք տնտեսական պահանջներ։ Վերջին հինգ օրը շուկայ են դուրս գալիս միմիայն կառքերի տէրերը։

—

Ներկայ տարվանից Թիֆլիսի առևտրական ուսումնարանում բացվում են երեք պատրաստական դասարաններ։

—

Սեպտեմբերի լոյս 4-ի գիշերը Գօլովինսկի պրօսպեկտում կողոպտել են Մամէզովի կօշիկների խանութը. Վնասները հասնում են, Մամեզովի ասելով, մի քանի հազարի։

—

Աղէտեալների օգտին ստացանք. 1. Տաշկենտից Սարգիս Աղայարեանից—15 ր. (այս պարոնից ստացվել է նոյնպէս 14 ր. 87 կ. և 23 ր.—տես «Մշակի» 86 և 96 համարները), 2. Կրասնովօդսկից—օր. Ս. Վաչեանի նշանադրութեան հանդիսում ժողոված է Գաբրիէլեանցի միջոցով 15 ր., 3. Կարսից՝ մի խումբ տիկիններից Տ. Մ. Ս.-ի և օր. Ա. Ա.-ի միջոցով 38 ր.։

—

Սուխումի ծխական դպրոցի հոգաբարձութեան նախագահ պ. Ս. Գրձելեան, երէկ մըտնելով խմբագրատուն, յայտնեց որ այս տարի Սուխումը Թերևս ուսուցիչ չունենայ շնորհիւ այն հանգամանքի, որ տեղական քահանաները և հոգաբարձուներից մի երկուսը — դրդված ինչ-ինչ միտումներից—արգելք են հանդիսանում ուսուցիչ հրաւիրելուն, չը նայած որ պ. Մուշխեան արդէն գտել է մէկին և պատրաստ է ուղարկել։

—

Ինչպէս յայտնի է, Բագուի կենտրոնական բանտի կառավարիչ Կօմարժենկօն բանտի փողը և բանտ դցվողներից առնված փողերը՝ մօտաւորապէս 600 ր. վերցնելով գիշերանց ինչ որ տեղ անյայտացել էր։ Թէև կառավարութիւնը քննութիւն էր բաց արել և կառավարչին որոնել, բայց իզուր։ Արդ, Բագուի Թերթերից մէկը հաստատ աղբիւրից իր ստացած լուրի համաձայն յայտնում է, որ յիշեալ Կօմարժենկօն, յայտնի չէ ինչ Թոյլտւութեամբ անցեալ օր կէսօրին, ժամի 12-ին, բանտ մտնելով մօտ է եկել բանտարկեալների սենեակները և գըրգել է նրանց, որ հաւաքվեն և միաբերան պահանջեն գեներալ-նահանգապետից, որպէսզի դարձնել իրան, Կօմարժենկօյին բանտի կառավարիչ նշանակէ։ Սակայն բանտարկեալները շատ լաւ ծանօթ լինելով Կօմարժենկօյի անցեալի հետ, ոչ միայն մերժել են նրա պահանջը, այլ և մեծ յուզմունք են ցոյց տուել թէ ինչպէս, ում հրամանով Կօմարժենկօն կարողացել է մտնել բանտ։

—

Շուտով կայանալու են Բագւում քաղաքային դումայի ընտրութիւնները 4 տարվայ, այսինքն 1907—1911 թ. պաշտօնավարող նոր ձայնաւորներ ընտրելու համար։ Դրա համար էլ Բագւում արդէն սկսվել է նախընտրական ագիտացիա։ Քաղաքագլխի պաշտօնակատար Բեհբուդ բէգ Սաֆար Ալիեվը հրաւիրել է այժմեան ձայնաւորներին մասնաւոր ժողովի, ընտրութիւնների գործը կանոնաւորելու համար։ Ժողովը տեղի է ունենալու սեպտ. 4-ին, երեկոյեան ժամի 6-ին, դումայի սրահում։

—

Մինչև այժմ Բագուի բանտում բանտարկեալները իրաւունք էին ստանում գրաքննութիւնից թոյլատրված ընթերցանութեան նիւթեր, գրքեր և լրագիրներ վերցնելու։ Այժմ Բագուի ոստիկանապետի կարգադրութեամբ այդ իրաւունքը ջնջվում է։

—

Բաթումից մեզ հաղորդում են, որ օգոստոսի 27-ին այնտեղի Նաբերեժնի փողոցով անցնող «Պարօժանովի» ալիւրի ֆիրմայի կառավարիչ Եգօր Կնեյզի վրայ յարձակվել են 4 զինված չարագործներ։ Նրա մօտ եղած 5 000 ռուբլուց, որը պահած էր զանազան գրպաններում, կողոպտողները կարողացել են վերցնել միայն 130 ռուբլի։ Կողոպտողներին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված։

—

Գանձակից հաղորդում են, որ օգոստոսի 19, 23 և 25-ին Գանձակի պոստ-հեռագրական գրասենեակում բռնվել են կշեռքի և փաթեթի կասկածով 27 կապոցներ, որոնց մէջ բռնալուց յետոյ եղել են 7000-ից աւելի լիքը փամփուշտներ։

—

Մահմեդականների Նիժնի-Նովգորոդի վերջին համագումարը որոշել է հրատարակել Պետերբուրգում ռուսերէն լեզուով ամենօրեայ մի լրագիր, որը նուիրված պէտք է լինի գլխաւորապէս մուսուլման կեանքի հարցերին և կարիքներին։ Հրատարակութեան գլուխ պէտք է կանգնի համագումարի կողմից ընտրված մի նոր մասնաժողով, որի մէջ մտան այսպէս կոչված մուսուլման սահմանադրական ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչները, որի ծրագիրը մօտ է ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագրին։ («Страна»)

—

Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտի վերատեսուչ պ. Ստրելեցկին, որը երկար տարիներ վարում էր այդ պաշտօնը՝ ներկայ ուսումնական տարվայ սկզբից նշանակված է Երևանի ուսուցչական սեմինարիայի վերատեսուչ, իսկ վերջինիս վերատեսուչ պ. Ա. Մ. Զասուրովիչը փոխադրված է Թիֆլիս՝ Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտի վերատեսչի պաշտօնով։

—

Զինւորական մինիստրութիւնից բոլոր հրամանատարներին մի հրահանգ է ուղարկված, որի մէջ ասված է, որ մինիստրների խորհրդի նախագահը ցանկութիւն է յայտնել, որ իբրև պահեստ արձակվող զինւորները ունենան իրանց հետ «Сельскій Вѣстникъ»-ի հրատարակած հետևեալ բրօշիւրները. «Ինչպէս են կամենում լուծել հողային հարցը», «Հողի և ազատութեան մասին», «Ռուս-ճապօնական պատերազմը» և այլն։ Ներքին գործերի մինիստրութեան զեմստվային բաժինը ուղարկել է այդ բրօշիւրները ձրիապէս և զօրքերի հրամանատարներին առաջարկված է բաժանել իրանց։ («Руск. Вѣд.»)

—

Մոսկվայի համալսարանի ուսանողների միջից կազմվել է մի խումբ, որի նպատակն է կազմակերպել Մոսկվայում «Տնտեսական ուսանողական ընկերութիւն»։ Գումարը մտադրութիւն կայ հաւաքել ուսանողներից և մասնաւոր նուէրներով։

—

Ինչպէս լսել է «Народъ и Дума» լրագիրը ամենաարժանահաւատ աղբիւրից, կառավարչական վերջին հաղորդագրութեան միակ հեղինակն է եղել մինիստրների խորհրդի դիւանատան կառավարիչ Ֆօն-Պլեվէի որդին։ Առ հասարակ երիտասարդ Պլեվէի շանսերը ներկայումս զգալի չափով բարձրացել են և, լուրերին նայած, ամենամօտիկ ապագայում նա Թերևս մի նոր ազդեցիկ պաշտօն ստանայ։

—

Ինչպէս հաղորդում է «Народъ и Дума» լրագիրը, Կարմիր Խաչում լուր է ստացվել, որ Սարատովի նահանգի սովալլուկ գիւղերին ուղարկած պաքսիմատը անկարելի է գործածել, որովհետև ամբողջը եղել է փտած։

—

«Сегодня» լրագիրը հաղորդում է, որ, լուրերին նայած, ծովապետ Դուբասովը Մոսկվայի ապստամբութիւնը ճնշելու համար գաղտնի գումարներից ստացել է մի միլիոն ռուբլի, որ տեղափոխված է արտասահմանեան բանկերից մէկի հաշւով։

—

Կամիշինից տեղեկութիւն է ստացվել, որ քաղաքի բոլոր իշխանութիւնները փախել են քաղաքից։ Իսպրավնիկը և մի քանիսի բնակարանները քարուքանդ են արված։ Այնտեղ է մեկնել նահանգապետը։

—

«Ռուս մարդկանց դաշնակցութիւնը» մօտ օրերս բլոկ է կազմել «Յեղափոխութեան դէմ ակտիւ կռիւ մղող ընկերութեան» հետ, որով վերջինս իր անդամներից մի քանիսին պատուիրել է պաշտպանել այն անձանց կեանքը, որոնք առաջին կազմակերպութեան գլխաւորներն են հանդիսանում։

—

Սիմֆերոպոլի «ռուս մարդկանց դաշնակցութիւնը» «Крым. Вѣстн.»-ում յայտարարել է, որ առաջնորդի կամ իր դաշնակցութեան անդամներից որ և է մէկի կեանքի դէմ կատարվող մահափորձի դէպքում ինքը անկարող է երաշխաւորել քաղաքի հանգստութեան համար։ Ազգաբնակութիւնը անհանգիստ դրութեան մէջ է և յուզված է, ի նկատի ունենալով վերոյիշեալ պրօվօկատորական գործունէութիւնը։

—

Պետերբուրգի Նարվայի մասի բանւորները հրատարակել են հետևեալ Թռուցիկը. «Ընկերներ, լրագիրներում տեղեկութիւններ տպագրվեցին, որ մենք պետական օղին խմում ենք այժմ աւելի շատ, քան թէ անցեալ տարի։ Դրա պատճառը շատերը համարում են այն հանգամանքը, որ մենք բարելաւել ենք մեր տնտեսական վիճակը և վաստակներիս մի մասը վատնում ենք օղու վրայ։ Ընկերներ, դա ճշմարիտ չէ, և մենք պարտաւոր ենք ապացուցանել այդ։ Մեր աւելացած փողերը հարկաւոր են մեզ ոչ օղու համար, և մենք վատնում ենք այդ փողերը մեր կանանց ու երեխաների վրայ։ Մի խմէք, ընկերներ, օղի. արհամարհեցէք խմողներին, և բօյկօտի ենթարկեցէք արբեցողներին։ Բոլոր ազնիւ բանւորները բարձր կը պահեն ողջախոհութեան դրօշակը»։ («Пет. Газ.»)

—

Մի արտասովոր, սենսացիօն հեռագիր է տըպագրվել «Русск. Слово»-ի լրագրի վերջին համարներից մէկում։ Հեռագիրը հաղորդում է, որ Եկատերինոսլավում կնքված է... ժանդարմական ոստիկանութեան տեղական բաժանմունքը։ Քննութիւն է կատարվում։ Բաժանմունքի գլխաւորը հեռացված է իր պաշտօնից։ Ասում են ինչ որ զանցառութիւններ են կատարվել։

—

Վարշավայից հաղորդում են «Русск. Слово» լրագրին, որ Օպոչնեկի գաւառում, խուզարկութեան ժամանակ սաստիկ ծեծի է ենթարկվել Պետական Դումայի նախկին անդամ Օստրօվսկին, որին արիւնոտված տարել են հիւանդանոց և յայտնել են, որ կալանաւորված է։

—

«Times» լրագիրը հաղորդում է, որ մօտ ժամանակներս Ֆինլանդիայում Պետական Դումայի նախկին աշխատաւոր խմբակի անդամները համաժողով են ունենալու՝ վճռելու առաջիկայ նոր Դումայի ընտրութիւնների հետ կապ ունեցող հարցերը։ Սպասում են Ալադինին, Անիկինին և Ժիլկինին գալստեանը։

—

Ներքին գործերի մինիստրը կրկին անգամ յիշեցրել է նահանգապետներին և շրջանային կառավարիչներին, որ գիւղական ծխական և համայնական ժողովներում կողմնակի անձանց թոյլ չը տրվեն ներկայ լինել։ Բացի դրանից համայնական և գիւղական վարչութեան պաշտօնեաներին խստիւ պէտք է արգելվէ հասարակական ապօրէն վճիռներ կազմել կամ թէ նրանց պատճէնները տալ։

—

«Понедѣльникъ» լրագիրը հաղորդում է, որ հռչակաւոր Րեննենկամֆը մօտ ժամանակներս կը նշանակվի Վարշաւայի գեներալ-նահանգապետ։

—

«Русск. Знамя.» լրագրի տպարանում, որ պատկանում է ռուս ժողովրդի միութեան, մեծ եռանդով տպագրում են «կոչեր» ուղղված բանւորներին, գիւղացիներին, ստարօօբրեադցիներին և քաղաքային բնակիչներին»։ Այդ կոչերը պատրաստվելուց յետոյ կը յանձնվեն նրանց, որոնք նշանակված կը լինեն ագիտացիա անելու գաւառներում։ Այդ կոչերից ըսկըզբում մտադիր են պատրաստել 5 միլիոն օրինակներ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ոստիկանական դեպարտամենտը հրաման է արձակել ժողովել ազգաբնակութեան մօտ եղած զէնքերը և, հնարաւոր եղածին չափ, աշխատել այլ ևս զէնք գնելու կամ կրելու համար նոր վկայականներ չը տալ։

—

«Рѣчь» լրագրին հաղորդում են. «Մեզ հաղորդում են, որ ղեկավարող շրջաններում առաջարկութիւն է ծագել, որ և արժանացել է համակրանքի, այն մասին, որ ամեն կերպ պէտք է աշխատել ապագայ Դումայից հեռացնել ժողովրդական ազատութեան կուսակցութեան ներկայացուցիչներին։ Եթէ հակառակ սպասածի, Դումա ընկնեն աւելի ծայրայեղ ձախակողմեան տարրերը, այդ դէպքում այդպիսի Դումային, ի նկատի ունենալով նրա բացարձակ յեղափոխական բնաւորութիւն ստանալը դժուար չի լինի ցրել, որովհետև ամենքի համար պարզ կը լինի նրա յեղափոխականութիւնը։ Իսկ եթէ այդպիսի տարրեր քիչ կը լինին, այն դէպքում միացեալ աջակողմեան կուսակցութիւնը կը չէզոքացնէ նրանց վնասակար ազդեցութիւնը, կանգ չառնելով նոյնիսկ այն հանգամանքի առաջ—հեռացնել Դումայի պատգամաւորների կազմից այդպիսի անդամներին, մեղադրելով նրանց այս կամ այն յանցանքի մէջ։ Եւ ընդհակառակը, կադէտների ներկայութիւնը, հանդերձ նրանց զգուշութեամբ և զսպված քաղաքականութեամբ— կը դժուարացնէ Պետական Դումայի արձակումը։ Միւս կողմից կադէտային պատգամաւորները չեն համաձայնվի հեռացնել Դումայի կազմից այն ընկերներին, եթէ նոյնիսկ նրանք պատկանելիս լինեն ծայրայեղ կուսակցութիւններին։ Ուստի բոլոր ջանքերը պէտք է ուղղված լինեն չը թողնելու կադէտներին։ Եւ եթէ մի որևէ վճռական կառավարութեան թեկնածուները չունենան աջողութեան շանսեր, այն ժամանակ պէտք է պաշտպանել ծայրայեղ ձախակողմեան կուսակցութեան թեկնածուներին, չը թոյլատրելով ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամներին։ («Р. В.» Թղթ.)

—

Երդ. հաւ. Մարգուլիէսի Կրօնշտադից ստացած տեղեկութիւնների համաձայն Օնիպկոյի մեղադրական ակտը յանձնվել է օգոստոսի 29-ին ցերեկով։ Մեղադրական ակտի մէջ մեղադրանքը պատճառաբանված է համաձայն 51 և 100 րդ յօդուածների, որով Օնիպկոյին մահ է սպառնում։ Ֆ. Մ. Օնիպկօն իրան պահում է հպարտ և վեհանձն. Նա այժմ նըստած է ծովային բերդական տան մէջ, որը 5-րդն է հաշւելով նրա բանտարկութեան տեղերից։ «(Тов.)»

—

Ոստիկանութեան դեպարտամենտը օգոստոսի 28-ին մի անգամ ևս կարգադրել է, որ Պետական Դումայի նախկին անդամների ձերբակալութիւնները և խուզարկութիւնները կատարվեն միմիայն նրանց՝ յեղափոխական պրօպագանդա մղելու մեղաւորութիւնը ապացուցանելուց յետոյ։ «(Р. В.)»

—

Արտակարգ պահպանութեան դրութեան հիման վրայ դադարեցված են «Око» և «Народъ и дума» լրագիրները։

—

«Сегодня» լրագիրը Կրակովի «Новая Реформа» լրագրից քաղում է մի անհաւատալի լուր, որ իբր Վարշաւայի գեն.-նահանգապետ Սկալօնը ներքին գործերի մինիստրի Թոյլտւութեամբ մեկնել է Բեռլին, որտեղից և ուղարկում է իր ադմինիստրատիւ հրամանները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 սեպտեմբերի

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 2 սեպտեմբերի։ Կողոպտելու նպատակով սիբիրեան բանկը մտած 4 չարագործները բոլորն էլ վրացիներ են։ Բանկի օպերացիան ժամը 2-ին արդէն վերջանում էր։ Այցելուներից միայն մի կին էր մնացել։ Կողպելով բոլոր անցքերը և դռները ու պատուհանների մօտ պահապան դնելով իրանց մարդկանցից երկու հոգու, երկուսն էլ մօտեցան դրամարկղին, վերցրին 31,000 ռուբլի և գնացին։ Ժամը 4-ին փողոցում բռնվեց մի վրացի, որին տարան բանկ։ Նրան ճանաչեցին ծառայողները, բայց նա հրաժարվում էր մասնակցութիւնից։

ԻՐԿՈՒՏՍԿ, 2 սեպտեմբերի։ Բելսկի գիւղաւում սպանված է պահակը, որը պահպանում էր արտիլերիսկի դիվիզիօնի դրամարկղը։ Չարագործները լսելով աղմուկ անյայտացան։ Փողերը անվնաս են։

ԵԼԻԶԱՎԵՏՊՕԼ (Գանձակ), (Պաշտ. Թղթակ.)։ Իսահակովի տպարանից փակ շինութիւնից գողացված են երկու արագատիպ մեքենաներ իրանց բոլոր պարագաներով։

ՄԻՏԱՎԱ, 2 սեպտեմբերի։ Զինւորական-դաշտային դատարանը լատիշ Զնօթտաին և Բերգինգային Ֆրաունբուրգում գինետան պահեստի կողոպտման համար՝ որի ժամանակ խլվեց 3000 ռուբլի և կալւածատէրերի Թալանելու համար—դատապարտեց կախաղանի. Պելթնին—4 տարի տաժանակիր աշխատանքների։

ՎԱՐՇԱՒԱ, 2 սեպտեմբերի։ Զինւորական-շրջանային դատարանում քննվեց Ֆուրմալի և Կօլադսկիի գործը, որոնք մեղադրվում էին սպանութեան մէջ։ Դատարանը Ֆուրմալին դատապարտեց 20 տարվայ տաժանակիր աշխատանքի, իսկ Կօլադսկիին արդարացրեց։

ՎԻԵՆՆԱ, 2 սեպտեմբերի։ Յունական հիւպատոս Արիպարիս վճռականօրէն հերքեց Սօֆիայից հաղորդված այն լուրը, իբր թէ Բ. Դուռը կայացրել է յարձակողական դաշինք Յունաստանի հետ ընդդէմ Բուլղարիայի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Զագարօդնի պրօսպեկտում քաղաքային ջրանցքի վարչութեան դրամարկղը երեկոյեան ժամը 10-ին, փորձեցին կողոպտելու։ Կողոպտիչները ներս խուժելով, սպառնալով բրաունինգներով ծառայողներին և պահապանին, սկսեցին կոտրել դրամարկղը, բայց չը կարողացան բաց անել և դատարկ հեռացան։ Դրամարկղում կար 10,000 ռուբլի։

ՏՕԿԻՕ, 2 սեպտեմբերի։ Պորտսմուտի դաշնագրի առիթով տեղի ունեցած անկարգութիւնների տարեդարձին՝ Տօկիօում տեղի ունեցան անկարգութիւններ ելեքտրաշարժի ընկերութեան բարձրացրած տոմսակների գների առիթով։ Անկարգութիւններին յաջորդեցին միտինգներ, որոնց ղեկավարում էին սօցիալիստները։ Ոստիկանատները վերածվեցին հիւանդանոցների։ Սօցիալիստ Մագումատօն առաջարկեց այրել ելեքտրաշարժը։ Ցոյցին մասնակցում էին 10,000 հոգի կարմիր դրօշակներով։ «Նիչի-Նիչի-Շինդուն» լրագրի գրասենեակը ջարդուփշուր է արված։ Կալանաւորված է 100 հոգի։ Ծեծից վիրավորվեցին 47 ծառայողներ և 11 ոստիկաններ։ Ջարդված են 52 վագոն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Լոյս սեպտեմբերի 2-ի գիշերը Ստարո գիւղում բռնված է սօցիալիստ յեղափոխականների գաղտնի տպարանը և կալանաւորված են նրա մէջ աշխատողները։ Ներքին գործերի մինիստրութիւնը ներկայացրել է մինիստրների խորհրդին մի ծրագիր՝ վերացնելու համար գիւղական հասարակութեան անդամների համար սահմանված սահմանափակումները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Պետերբուրգի վագօնաշինական գործարանի հրդեհը շարունակվում է, թէև վերջանալու վրայ։ Վնասվածների թիւը մինչև հիմա հասաւ 22 հոգու. հրդեհաշէջների և բանւորների մի քանիսը ծանր են վիրաւոր։ Գործարանում աշխատանքները ժամանակաւորապէս դադարեցրած են։ «Переломъ» լրագրի հրատարակութիւնը վերսկսվեց։

ՌԻԳԱ, 1 սեպտեմբերի։ Եղբարք Բուշ երկաթագործական գործարանի գրասենեակում օրը ցերեկով ատրճանակի մի հարուածով սպանված է անյայտ մարդկանց ձեռքով՝ գործարանի տէրերից մէկը—Ալֆրեդ Բուշը։

ԺԸՆԵՎ, 1 սեպտեմբերի։ Ոստիկանութիւնը Բեռնում կալանաւորեց 3 հոգու, որոնց յանձնումը պահանջեց ռուսաց կառավարութիւնը, պատճառաբանելով էնրանով, որ նրանք Դուշեթում մարտի 30-ին, 315 հազարի կողոպտման մէջ մեղաւոր են։

ՍՕՖԻԱ, 1 սեպտեմբերի։ Մարիենբադում սուլթանի ուղարկած Մէլհամէի և Ֆերդինանդի հետ տեղի ունեցած խօսակցութեան մասին հաղորդում են, որ իշխանը սաստիկ դատապարտեց Թուրքաց քաղաքականութիւնը մակեդօնական բուլղարների ջնջման առիթով, որը առաջացրեց իշխանութեան մէջ սաստիկ յուզմունքներ ստեղծեց շատ լուրջ դրութիւն։ Իշխանը յայտնեց, որ նա հաւատում է սուլթանի բարեկամեցողութեան և իմաստութեան, բայց Թուրքաց իշխանութիւնները գործում են անհամաձայն այդ ցանկութիւններին։ Նէջիբը յայտնեց, որ սուլթանը անկեղծ ցանկանում է խաղաղութիւն։ Դրան ապացոյց կարող են ծառայել սուլթանի հրատարակած—մի քանի իրադէները բուլղարների օգտին։

ՄՕՍԿՎԱ, 2 սեպտեմբերի։ Գործակալութեան Թղթակիցը խօսակցութիւն ունեցաւ Գուչկովի հետ՝ 17-ի հոկտ. դաշնակցութեան յարաբերութեան մասին միւս քաղաքական կուսակցութիւնների հետ։ Գուչկովը յայտնեց, որ խաղաղ վերանորոգման կուսակցութեան հետ համաձայնութիւնը հնարաւոր և ցանկալի է։ Դաշնակցութեան 120 տեղական բաժանմունքների մեծամասնութիւնը ցանկութիւն յայտնեց համաձայնութեան մասին, փոքրամասնութիւնը կը հպատակվի մեծամասնութեան։ Կադէտների հետ համաձայնութիւնը անհնարին է, որովհետև հոկտեմբերեան 17-ի Դաշնակցութիւնը և խաղաղ վերանորոգիչները Ռուսաստանի խաղաղ վերանորոգման սահմանադրական միջոցների կողմնակիցն են, կադէտները գնում են աւելի կռուի ճանապարհով, որի ապացոյցը ցոյց է տալիս Վիբորգի կոչը։ Համաձայնութիւնը առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան հետ անկարելի է, նրա մի մասը ընտրութիւնների ժամանակ կը միանայ միապետականների հետ, իսկ միւս մասը կադէտների։ Իսկ ինչ վերաբերում է նախընտրողական գործունէութեան, վճռված է հետևել կադէտների օրինակին, հրատարակել Մոսկվայում լրագիր, մեծացնել գաւառական մամուլը, և ուղարկել Թափառաշրջիկ ագիտատօրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Ամառվայ ընդմիջումից յետոյ կայացաւ առաջին ռուս մարդկանց ժողովը։ Ապտեկարսկի կղզում ընկած զոհերի և Մինի համար կատարված հոգեհանգստից յետոյ՝ սկսվեց քննվել կոչի բնագիրը ուղղված է ամբողջ ռուս ազգին և համախոհ կուսակցութիւններին։ Հոկտեմբերի 2-ին Կիևում կը կայանայ 3-րորդ

համառուսական ռուս մարդկանց համագումարը։

ՎԼԱԴԻՎՈՍՏՕԿ, 2 սեպտեմբերի։ Մի քանի մարդիկ, մտնելով սիբիրեան բանկի բաժանմունքը և «ձեռքները վեր» աղաղակելով, վերցրին դրամագլուխը և անյայտացան։

ԱՍԽԱԲԱԴ, 2 սեպտեմբերի։ Մերվ կայարանում երբ երկաթուղին ժամանեց, երկու հայերի մօտ տոպրակներում գտնվեց 1500 փամփուշտ։ Մէկը բռնված է, իսկ միւսը անյայտացաւ։

ՀԱՒԱՆՆԱ, 2 սեպտեմբերի։ Ապստամբների գլխաւորները «Դօնեվը» կրէյսերի հրամանատարի մօտ ուղարկեցին երկու գաղտնի պատուիրակներ՝ յայտնելով, որ պատրաստ են անձնատուր լինելու։ Հրամանատարը պատասխանեց, որ չէ կարող խառնվել Կուբայի գործերում։ Նախագահ Պալման այդ հարցի առիթով Միացեալ-Նահանգների կառավարութեան հետ բանակցութիւններ սկսեց։

3 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Դվերի կօզակների արտայայտած ամենահպատակ զգացումների առիթով ստամանից ստացված հեռագրի հիման վրա զինւորական մինիստրի ամենահպատակօրէն արած զեկուցագրի վրա Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց սեփական ձեռքով գրել. «Անկեղծօրէն շնորհակալ եմ Դվերի կօզակներից՝ նրանց հաւատարիմ և անխախտ ծառայութեանց համար»։

ՄՈՍԿՎԱ, 2 սեպտեմբերի։ Զինւորական-դաշտային դատարանը Զվերեվին կախաղանի միջոցով մահվան դատապարտեց կալանաւորելու ժամանակ ցոյց տուած ընդդիմադրութեան համար։

ՕԴԵՍՍԱ, 2 սեպտեմբերի։ Զինւորական-դաշտային դատարանի վճռին են ենթարկված 6 անիշխանականներ, որոնք զինված յարձակում գործեցին Դնեպրովսկի գաւառի Կախովկում միջազգային գործակալութեան բանկի վրա, խլեցին 11,000 ռուբլի և սպանեցին ծառայողներ, քաղաքապահներ և այցելուներից 16 հոգի։ Նոյեմբերեան ապստամբութեան գործը Սեվաստոպոլում, որի նախնական քննութիւնը դադարեցրած էր փաստաթղթերի յափշտակման առթիւ, մըտադրվում է գործի քննութիւնը Սեւաստոպոլից տեղափոխել Օչակով բերդը։

ԿԻԵՎ, 3 սեպտեմբերի։ Զինւորական-շրջանային դատարանը գնդակահարութեան դատապարտեց 5-րդ Սապեօրնի բաժանմունքի պոդ-պորուչիկ Ժադօնովսկուն, որը Կիևում գլխաւոր մասնակիցն էր սապեօրների ապստամբութեան։ Վճիռը ներկայացված է զօրքերի հրամանատարի հաստատութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Թագաւոր կայսրը լէյբ-գվարդիայի Ատամանսկի Թագաժառանգի գնդին տօնի առիթով արժանացրեց հետեւեալ հեռագրին. «Ի սրտէ շնորհաւորում եմ քաջ ատամանցիներին իրանց գնդի տօնը. խմում եմ նրանց կենացը եւ յայտնում եմ խորին շնորհակալութիւնս անվեհեր գնդին իր ազնիւ եւ հաւատարիմ ծառայութեան համար Ռուսաստանին եւ Ինձ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Ֆինլանդիայի սէյմի հանդիսաւոր փակումը Բարձրագոյն հաստատված է։ Ժամանակի սղութեան (?) փակելը վերապահված է Ֆինլանդիայի նահանգապետին։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 3 սեպտեմբերի։ «Բէրնբորգ» նաւով երէկ Հելսինգֆորս է բերված աղիւսի բեռի անուամբ 500 հրացան շվէյցարական «Վետերլինգ» սիստեմի։ Հրացանները բռնեց տեղական ոստիկանութիւնը, մի մասը ափ իջեցնելու ժամանակ, իսկ միւս մասը մի վաճառականի բակում, որը տանում էր հրացանները։

ՄԻԼԱՆ, 3 սեպտեմբերի։ Այսօր բացվեց խաղաղութեան դաշնակցութիւնների միջազգային կօնգրէսը։ Արտաքին գործերի մինիստրի ներկայացուցիչ Տիգօնին յիշատակեց, որ պատգամաւորների պալատում ինքը յայտնել է իր համակրութիւնը Մեծ-Բրիտանիայի նախաձեռնութեան համար զինաւորման կրճատումների առիթով։ Ամերիկական կառավարութեան ներկայացուցիչը կարդաց Ռուզվէլտի հեռագիրը, որի մէջ նախագահը ցանկութիւն է յայտնում, որ խաղաղութեան գործը ժողովուրդների մէջ յաղթող հանդիսանայ։

ՆԻՒ-ԵՈՐԿ, 3 սեպտեմբերի։ Նիւ-Եօրկից հասած տեղեկութիւնների հիման վրա, «Լուիզինա» և «Վիրգինիա» զրահակիրները 800 հոգով և իւրաքանչիւրը գաղտնի հրամաններով դուրս եկան դէպի ծովը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ծովային գնդերը, որոնք նշանակված էին Կուբա ուղարկվելիք կրէյսերների համար, արտակարգ գնացքով ուղարկվում են Նորֆոլկ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 3 սեպտեմբերի։ Գեներալ-նահանգապետը սէյմի փակումը նշանակեց սեպտեմբերի 5-ին։

ՎԱՐՇԱՒԱ, 3 սեպտեմբերի։ Գործադրվեց զինւորական շրջանային դատարանի վճռած մահվան դատավճիռը Բրժիզինսկի վերաբերմամբ գինետան վրա զինված յարձակում գործելու պատճառով և Բուդնիցկիին՝ քաղաքային վերակացուին սպանելու փորձ անելու համար։

ԲԻԼԲԱՕ, 3 սեպտեմբերի։ Քաղաքի պաշարողական դրութիւնը վերացված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Գեներալ Տրեպովի հոգեհանգստին ներկայ էին Մեծ Իշխանները։ Գեներալի դագաղի վրա դրված էր խաչ սպիտակ վարդերից Կայսրուհու անունից։

ԱՍԽԱԲԱԴ, 3 սեպտեմբերի։ Ժամանակաւոր զինւորական դատարանը սեպտեմբերի 7-ից մինչև 23-ը կը քննի՝ առաջին, երկրորդ և երրորդ Անդրկասպեան երկաթուղային հրացանաձիգ բատալիօնում տեղի ունեցած անկարգութիւնների գործը։

ՄԻՏԱՒԱ, 3 սեպտեմբերի։ Դատաստանական պալատում քննվեց լատիշ սօցիալիստական կուսակցութեան պատկանող 3 անդամների գործը։ Նրանք կալանաւորված են փողոցների պատերին թուղթիկներ փակցնելու ժամանակ։ Մէկը դատապարտված է բանտարկութեան 2 տարի 8 ամիս ժամանակով, իսկ երկուսն էլ 4 տարով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Սիբիրեան երկաթուղու երկրորդ գիծն անցկացնելու հարցի վճիռը կախված է ճանապարհների մինիստրի դէպի Սիբիր արած ճանապարհորդութեան հետեւանքներից։

ՄՈՍԿՎԱ, 3 սեպտեմբերի։ Նահանգական բանտում կախաղան հանված է 19 տարեկան բանւոր Զվերեվը, որին դատապարտեց զինւորական-դաշտային դատարանը նախընթաց օրը կալանաւորման ժամանակ ցոյց տուած զինված դիմադրութեան համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Թագաւոր կայսրի հրամանով գեներալ Դեդիւլինը սեպտեմբերի 3-ից ստանձնեց պալատական կոմենդանտի պաշտօնի կատարումը։

ԲԵԼՈՍՏՕԿ, 3 սեպտեմբերի։ Ռուսական հեռագրական գործակալութեան հաղորդած այն լուրը, որ իբր թէ բանտ են տարվել գիւղացի ագիտատորներ և իբր թէ գիւղացիները հրաժարվում են վճարել տուրքերը—հիմքից զուրկ է։ Գիւղերում ագիտացիա չէ մղվում, տուրքերը վճարվում են կանոնաւոր կերպով։

ԲԵՐԼԻՆ, 3 սեպտեմբերի։ «Նորդ-Դեօյչէ-Ալգեմէյնէ-Ցայտունգ»-ը ասում է, որ Սէդլէցի ջարդի դէպքերը ապացուցանում են, թէ ինչ չափի կարող է հասնել բանը, եթէ ապստամբները անընդհատ մահափորձեր են կատարում պետական իշխանութեան ներկայացուցիչների կեանքի դէմ, երբ վերջիններս կատարում են իրանց ծանր ու դժուարին ծառայական պարտականութիւնները։ Ապա լրագիրը ասում է, որ ոչ ոք չէ կարող կասկածել, որ ռուսաց կառավարութիւնը անկեղծօրէն ի կատար կածէ իր մտադրութիւնները. սակայն կառավարութեան ուրուագծած բարենորոգումները իրականացնելու համար անհրաժեշտ է Ռուսաստանի վերակենդանացնելու ծարաւի տարրերի աջակցութիւնը։ Ռուս ժողովրդին մնում է ուղարկել նոր Պետական Դուման ընդունակ մարդիկ, որոշել ուտօպիան իրականութիւնից, որպէսզի ճշմարտութեան հողի վրա առաջանայ բեղմնաւորիչ աշխատանք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9 ½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ. հիւ։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1 ½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1 ½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաւոր.
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7 ½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ԱՐԻՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
Դրամատիկական անցք մի գործող.
Հեղ. Պ. Հ. Լուազօնի
Թարգմ. Փր. Տ. Զաւէն
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին։ 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Թուաբանական խնդիրների ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Եւտուշեվսկուց և ուրիշներից քաղուած)
կազմեց Ս. Զօրչոփեան
Գինն է 30 կոպ.։
Վաճառվում է հեղինակի մօտ Нахичеван н. Д. Феодоровская ул. д № 12. 4—5

ՁԵՌՆԱՐԿ ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
դասագրքերիս գները պակասեցնելու մասին ինձ եղած դիմումները ամենայն ուրախութեամբ յարգելով՝ յայտնում եմ, որ սոյն յայտարարութիւնից յետոյ միայն, և ոչ մինչև այժմ, աշխատութիւններս վաճառվելու են Թիֆլիսի Կենտրօնական, Կովկասեան և Գուտտենբերգ գրավաճառանոցներում հետեւեալ գներով։
«Ձեռնարկ» Ա. տարի. փոխանակ 60-ի՝ 45 կ.
Բ. տարի. » 40-ի՝ 25 »
Գ. տարի. » 40-ի՝ 25 »
«Մի պտոյտ» փոխանակ 40-ի՝ 30 կ.
«Բարի մայր Մարիամը» վէպիկ 20-ի՝ 15 կ.
Արսէն աւ. քահ. Բագրատունի
(օգ. 18, 24, 29 սեպտ. 3, 5, 12) 5—6

ՅՈՎՍԷՓ ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ
ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆՈՒՄ
Ընդունվում են աշակերտներ՝ գիշերօթիկ և երթեւեկ, որոնք պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են հետեւեալ լեզուները՝ ռուսերէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն։
Тифлисъ, Гановская ул. № 7.
(սեպ. 1, 3 և 5) 10—10

Բացված է բաժանորդագրութիւն
„ՁԱՅՆ“
շաբաթաթերթի, որ շուտով լոյս կը տեսնի։
Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.։ Ամսական Թիֆլիսում 20 կ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.։ Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ, редакція «Дзайнъ».
Խմբագիր՝ բժ. Տ. Իսախանեանց
Հրատարակիչ՝ Մ. Դոլուխանեանց
(կ. ե.) 2—3

Մերվի, Վաղարշապատի, Վելիցիխեէի, Վանք գիւղի և Զարդախլուի համար
Հարկաւոր են
ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ
Դիմել՝ Ուսուցչական միութեան կենտրոնական խորհրդին։ 1—1

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Երկու սեռի մանուկների համար։ Ընդունելութիւնը սկսված է, ուսումը՝ սեպտեմբերի 6-ից. Բեհբութեան փող. սեփ. տ. 25։
(սեպ. 2, 3, 5, 6, 8, 10, 14, 17) 2—8

Ալէքսանդրոպոլի Ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին ստանձնել նոյն եկեղեցու ծխական տղայոց դպրոցում ուսուցչի պաշտօն, քառասուն տասը երգեցողութեան և տասը ուրիշ առարկաներից, երեսուն ռուբլի դասավնով։ Դիմել հոգաբարձութեանը մինչև ամսիս 8-ը, հետեւեալ հասցէով՝ Александрополь, Арутюну Гаспаряну. 1—1

Ս. Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութեամբ
Լոյս է տեսել
և վաճառվում է
„ԼԾԻ ՏԱԿ“
յայտնի վէպի Բ.-րդ հատորը։
Լրիւ թարգմանութիւն։
Գինն է 50 կոպ.
Ցանկացողները կարող են դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոց։
ե. հ. շ. 1—3

Յովհաննէս Դաւրեանի
հրատարակութեամբ
Լոյս են տեսել
№ 5. Մօպասան, «Մի կեանք», Թարգմ. Ս. Տ.-Անանեան . . . 1 ր.
№ 6. А. Агаронянъ, «Кусочекъ хлѣба», «Петухъ» Թարգմ. Վ. Բաբիեան . 10 կ.
№ 7. Անենսկայա, «Հանրապետութիւն» Թարգմ. Ս. Տէր-Անանեան . 5 կ.
№ 8. Ա. Բէբէլ, «Քրիստոնէութիւն և Սօցիալիզմը» Թարգ. Ս. Տէր-Անանեան 10 կ.
Շուտով լոյս կը տեսնեն՝
№ 9. «Զիլեյերիա»
№ 10. «Կորչեն Սօցիալ-Դեմօկրատները»
Դիմել հրատարակչին՝ Армянскъ, «Гавр. губ.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրավաճառներին։ 1—6

ԲԺԻՇԿ
Ա. Միխրաբեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 12—2, երեկոյեան 6—8, Սօլոլակ, անկիւն Բէհբութեան և Պասկևիչի փողոց, № 33/15։
(ա. օ.) 1—100

Տպագրվում է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
Հայ կտրիճները
Պատկեր հայ-թուրքական կռիւներից, 16 երես
Գինը 7 կոպէկ։
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին՝ Հաւլաբար, Լաղարեվսկայ, տուն Մուրադովի։ 100-ից պակաս հեղինակին չը դիմել։ 100—300 օր. պահանջողներին 22% զեղչ, 300-ից աւելի 26%։ Ճանապարհածախսը պահանջողի հաշուին։
(ե. հ. շ.) 1—5

Փանձակում տեղի ունեցած բռնաւումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւ հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարութինով
(հ. կ. ե.) 54—100

„ՎԵՐՍԱԼ“
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրօնական մասում
Վօրօնցովի արձանի մօտ,
ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը։ Համարները սկսած 1 ռուբլուց և աւելի։ Ցերմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով։ Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէկտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ։ Օդի և լոյսի առատութիւն։ Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն։ Խնդրում ենք չը լսել գործակալներին, երբ թէ ազատ համար չը կայ և այլն։
(կ. ե. հ.) 17—24

Մի հայուհի, որը լաւ գիտէ ռուսերէն և ֆրանսերէն լեզուները, ցանկանում է ճաշի և սենեակի փոխարէն ինտելիգենտ ընտանիքում երեկոյեան պարապմունքներ ունենալ։ Հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը։ 4—5

Լոյս տեսաւ առաջին պատգրութեամբ
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ
Ուսումն մայրենի լեզւի
Չորրորդ գիրքը
Գինն է 90 կոպէկ։
Գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրախանութում, ուր վաճառվում են և առաջին, երկրորդ և երրորդ գրքերը։ Հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղչ է լինում։ Յօրինողի հասցէն՝ Лермонтовская № 4. 3—10

Երևանի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են։
Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Վլաս Վլասեանց

Քաղաքիցս մեկնելու պատճառով մինչև սեպտեմբերի 8 ը վաճառվում են էժան և ընտրութեամբ՝
ՄԵՂՐԱՃԱՆՃԵՐ
փեթակներով։ Ելիզավէտինսկայա փողոց, տուն № 130, Վ. Ա. Սարօ.

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում ծախվում են
«Թուաբանական խնդիրներ և օրինակներ», ա. մաս, փոխադրութիւն Ար. Սպարապետեանի . . . 30 կ.
Նոյնը բ. մաս . . . 30 կ.
Նոյնը գ. մաս . . . 30 կ.
Գումարով գնողներին զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ». 9—10

Մակար Տէր-Սարգսեանի
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Գինը 30 կոպ.
ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կոպ.
Уроки чистописанія
Գինը 25 կոպ.
100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղչ։
Դիմել՝ Թիֆլիս—Կենտրօնական գրավաճառանոցին։ Երևան՝ յօրինողին։ 7—10

Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանի
աշխատութիւններ եւ հրատարակութիւններ
նոր տպագրութեամբ.
«Կէնչէլի» բանաւոր և գրաւոր հաշւելու խնդիրների, երկրորդ գիրք, երրորդ տարվայ ուսուցման նիւթը, ստացված խոշոր տառերով, ընտիր թղթի վրա, գինը . . . 50 կ.
«Կէնչէլի» բանաւոր և գրաւոր հաշւելու խնդիրներ, առաջին և երկրորդ տարվայ ուսման նիւթը, գինը . 35 կ.
«Մայրենի լեզու», չորրորդ տարի, նոր տպագրութիւն, լրացրած. քերականական և ուղղագրական վարժութիւններով և բազմաթիւ նոր յօդուածներով ճոխացրած, 12 տպ. գինը . . 55 կ.
«Մայրենի լեզու», երրորդ տարի, 15 տպ. գինը . . . 50 կ.
«Մայրենի լեզու», երկրորդ տարի, 21 տպ. գինը . . . 40 կ
«Մայրենի լեզու», առաջին տարի, 32 տպ. գինը . . . 25 կ.
Պահեստը կենտրոնական գրավաճառանոցում։
Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի ժամանակաւոր հասցէն՝ Тифлисъ, Гостинница «Викторія». Николаю Теръ-Гевондяну.
(օր ու մէջ) 2—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների և կանդիդատների, որ, ի նկատի առնելով որ բոլոր միջնակարգ դպրոցներում սկսվում են պարապմունքները և վերաքննութիւնները, երկուշաբթի օրվանից, այսինքն օգոստոսի 28-ից երկու սեռի աշակերտներին, նաև երեխաներին ժողովարանի ամառային շինութեան մէջ մուտքը արգելված է։
29, 31, 2 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նօտար Միքերովի։ (ե.հ.շ.) 49—100

Կար ու ձևի և ձեռագործի ուսումնարան
„ԱՇԽԱՏԱՆՔ“
Աշակերտուհիների ընդունելութիւնը շարունակվում է օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 20-ը, ժամը 11—2-ը։
Աւանդվում են՝ ռուսերէն և թուաբանութիւն (անգրագէտների համար)։ Կար ու ձև ամբողջ դասընթացքի վճարը ըստ կարողութեան։ Պատուէրներ՝ տիկնանց զգեստներ, վերնազգեստներ և սպիտակեղէններ։
Հասցէն՝ Բեբուտովսկի փողոց № 17, III գիմնազիայի դիմաց։
(ե. հ. շ.) 5—5

ԶՈՒԹԱԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին և վերջը յունիսի 1-ին
Ուսման տարվայ վճարն է 90 ռուբլի 2 կիսամեակներով
Ընդունելութիւնը օգոստոսի 29-ին, ամեն օր, ցերեկվայ 10—1 ժամը և երեկոյեան 5—7 ½ ժամը։ Грибоедовская, 5
(ա. օ.) 6—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԳԵՈՍԵԱՆ
Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 10—11., ժ. իսկ երեկոյեան 6—7 ժ.։ Գրիբոյեդովսկայա փողոց, տ. 15, տէլէֆօն № 1000.
(ե. հ. կ.) 3—10

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կազբեկսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազբեկսկի փողոցից № 2.
(ա. օ.) 224—300

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)
Ցանկանում են ուսուցչական պաշտօն ... նալ հայոց դպրոցներում։ (Ցանկալի է ... նոյն տեղում)։ Դիմել՝ Москва, Мал. Хар...новскій пер., д. Котова, кв. 10.
7—...

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼՈՒՄ
ՆԱԽԿԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
Ա. Արաբաջեանցի և պանսիոն Հ. Խաչատ...րեանցի վերսկսում է երթեւեկ և գիշերօթ... աշակերտների ընդունելութիւնը։
Դպրոցի նպատակն է մատչելի գներով ...ջողութեամբ աշակերտներ պատրաստել ...տրական դպրոցը ընդունվելու համար։
5—...

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւ... ժամանակաւորապէս կրծքի։
Քննութիւն և բուժումն X ճառագայթ... առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5...
Բէհէնեվսկայա փող. տ. № 7 (Վեցեր... բանկի մօտ)։
16—...

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթեւեկութիւնը)

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապ...
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթումի հասնելը	1 » 33 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 49 ր.

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Գ. ՎԱՆՑԵԱՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
1) Լոյս տեսան. համառօտ «Պատմութիւն հայոց», պատկերազարդ, ծխական դպրոցների համար . . . 50
2) ՓՈՔՐԻԿ, «Գրչանի ուղղագրութիւն» . . . 5
3) «Պատմական քերականութիւն» աշխարհաբարի, մեծերի համար . 75
4) «Դպրոցական քերականութիւն», ստորին դասարանների համար . 25
5) «Հայ հեղինակներ», Բ. տպ., մեր բոլոր յայտնի հեղինակների կենսագրութեամբ . . . 1
Դիմել՝ Тифлисъ, Коммерческое училище, Ванціанъ և կամ գրավաճառներին
Գումարով առնողներին 20% զեղչ։
(ե. հ. կ.) 11—20

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի
Գինն է 75 կոպէկ։
Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուած 25 օրինակ գնի... 75 կոպէկի տեղ 50 կոպէկ։ Ճանապարհածախսը (25 օրինակի համար պօստի փաթեթ... ռուբլի) գնողների վրա է։ Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադիր... Պատուէրներն անյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն։ Դիմել՝ Эчміадзинъ, Академ... нуку Абегяну, կամ Թիֆլիսի գրավաճառներին։
(ե. հ. ու. կ.) 10—

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան անօրէնութեան ներքոյ գտնվ...
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայելեան պրօսպ., տուն № 24/4.)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։ Դասընթաց... աւարտողներին տրվում են առեւտրական... Առարկաներն են. 1) առեւտրական... տեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական... բանկային և գործարանային). 3) առեւտրական թուաբանութիւն. 4) կանոնագրութ... (առեւտրական իրաւունք. մուրհակի կանոնագրութիւն). 5) առեւտրական թղթակցութ...թիւն. 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (... մեքենայով ձեռքի ուղղել)։ Առարկաները ուսուցանվում են Վիէննայի առևտրակ... ակադեմիայի ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։ Կուրսերին կից բացվում...
ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի... ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում են և ... են ձրիաբար կուրսերի հիմնողի բնակարանում
Առեւտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼ...
(ե. հ. շ.) 7—

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատ...
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) ...վում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 16—30
(ե. շ.)